ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

հանրային վերահսկողության ուղեցույց



ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

հանրային վերահսկողության ուղեցույց

Երևան 2024

Սույն ուղեցույցը մշակել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ Միացյալ Թագավորության (ՄԹ) կառավարության՝ ՄԹ Միջազգային զարգացման աջակցության շրջանակներում ֆինանսավորվող և ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի կողմից իրականացվող «Աջակցություն ժողովրդավարության կայացմանը Հայաստանում» (ԱԺԿՀ) ծրագրի միջոցով:

Բովանդակության համար պատասխանատու է հեղինակը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի դրամաշնորհատուների տեսակետները:

ՀՏԴ 329(479.25):336
ԳՄԴ 66.69(5Հ)+65.26
Կ 970

Փորձագետ՝ Տիգրան Մուղնեցյան
Գրախոսներ՝ Սոնա Այվազյան, Մարիամ Հովեյան
Ձևավորող՝ Նորա Գալֆայան

Կ 970 ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: Հանրային վերահսկողության ուղեցույց.- Եր.: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2024.-68 էջ:

Ուղեցույցի նպատակն է աջակցել Հայաստանում քաղաքական գործընթացներով շահագրգիռ քաղաքացիական հասարակության կառույցների ու զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին և հետազոտողներին՝ իրականացնելու հանրային վերահսկողություն երկրում գործող կուսակցությունների ֆինանսների, այդ թվում՝ նախընտրական քարոզարշավների ֆինանսավորման նկատմամբ: Ուղեցույցը կարող է նաև օգտակար լինել հենց կուսակցությունների համար՝ օգնելու նրանց դրսևորել առավել պատասխանատու վարքագիծ հանրության առջև, բարելավելու իրենց ֆինանսական հաշվետվողականությունը և փոխադարձաբար վերահսկելու միմյանց գործունեության օրինականությունը:

ՀՏԴ 329(479.25):336
ԳՄԴ 66.69(5Հ)+65.26

ISBN 978-9939-1-1915-1
© «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2024
Կայքէջ՝ www.transparency.am

Բովանդակություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ **4**

ՆԱԽԱԲԱՆ **5**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **7**

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ **10**

Օրենսդրություն և իրավասու մարմիններ 10

Կուսակցությունների ընթացիկ ֆինանսավորում 12

Մուտքեր (եկամուտներ) *13*

1. Մասնավոր ֆինանսավորում *13*

2. Պետական ֆինանսավորում *18*

Ելքեր 21

Հաշվետվողականության մեխանիզմներ 22

1. Տարեկան հաշվետվություններ *22*

2. Ֆինանսական աուդիտ *25*

3. Կուսակցության ղեկավար մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրեր *26*

Նախընտրական քարոզարշավի ֆինանսավորում 28

Ընտրական գրավ 28

Մուտքեր / նախընտրական հիմնադրամին նվիրատվություններ 29

Ելքեր / նախընտրական հիմնադրամի ծախսեր 31

Խնդրահարույց ֆինանսավորում 34

1. Վարչական ռեսուրսների օգտագործում *34*

2. Երրորդ անձանց կողմից ֆինանսավորում *35*

Հաշվետվողականության մեխանիզմներ 36

1. Նախընտրական հիմնադրամների հայտարարագրեր *37*

2. Կուսակցությունների և թեկնածուների գույքի և եկամուտների մասին հայտարարագրեր *38*

ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ **41**

Ի՞նչը ստուգել 41

Ինչպե՞ս ստուգել 43

Որտե՞ղ փնտրել 44

Հավելված 1. Կուսակցությունների ֆինանսավորման խախտումների և վարչական ռեսուրսի չարաշահման առնչությամբ պատասխանատվությունը 46

Հավելված 2. Կուսակցությունների տարեկան հաշվետվության բովանդակությունը 58

Հապավումներ

ԱԺ	Ազգային ժողով
ԵԱՀԽ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդակցություն (ներկայում՝ ԵԱՀԿ, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն)
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԸԸՀ	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
ԸԻԴ	Ընդհանուր իրավասության դատարան
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ԿՖ	Կուսակցության ֆինանսավորում
ՀԿԴ	Հակակոռուպցիոն դատարան
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՎՀՀ	Հարկ վճարողի հաշվառման համար
ՎԴ	Վարչական դատարան
ՎԻՎՕ	ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք
ՎՌ	Վարչական ռեսուրս
ՎՎԾ	Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՔրՕր	ՀՀ քրեական օրենսգիրք

ՆԱԽԱԲԱՆ

Կուսակցությունները քաղաքական միավորումներ են, որոնք հանրային խմբերի շահերի ու արժեքների վրա հիմնված գաղափարախոսություններ ձևավորելու և համակիրներ ներգրավելու միջոցով ձգտում են ձեռք բերել իշխանություն և մասնակցել երկրի կառավարմանը: Դրանք առանցքային դերակատարում ունեն ժողովրդավարական պետություններում:

Կուսակցությունների արդյունավետությունը, մարդկային լայն զանգվածներ ներգրավելու, քաղաքական գործընթացներում որակյալ մասնակցություն ունենալու հանգամանքը մեծապես պայմանավորված է նրանց ռեսուրսներից՝ ինչպե՛ս մարդկային, այնպե՛ս էլ ֆինանսական: Միաժամանակ՝ ֆինանսների շրջանառությունը ենթադրում է կոռուպցիոն ռիսկեր, ինչը կարող է խաթարել կուսակցությունների նկատմամբ վստահությունը և խոչընդոտել նրանց հանրային գործառույթների ու նպատակի լիարժեք իրականացմանը: Ապօրինի ծագում ունեցող, մասնավորապես՝ օտարերկրյա աղբյուրներից ֆինանսավորումը կարող է հանգեցնել պետական շահի և ազգային անվտանգության ռիսկերի:

Կոռուպցիոն ռիսկերը կառավարելու և նվազեցնելու, ընտրական գործընթացներում հավասար մրցակցություն ապահովելու, ազատ ու արդար ընտրություններ երաշխավորելու, ազգային անվտանգության ռիսկերը բացահայտելու և հնարավոր վնասները կանխելու հիմնական գործիքը ֆինանսների թափանցիկության և հաշվետվողականության երաշխավորումն է, որի համար միջազգային պրակտիկայում գործում են հատուկ պետական ինստիտուտներ և մեխանիզմներ: Ի լրումն, առանձնահատուկ կարևորություն ունի հանրային վերահսկողությունը և դրա իրագործման համար պատշաճ հիմքերի ստեղծումը պետության կողմից:

Սույն ուղեցույցի նպատակն է աջակցել Հայաստանում քաղաքական գործընթացներով շահագրգիռ քաղաքացիական հասարակության կառույցների ու զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին և հետազոտողներին՝ իրականացնելու հան-

րային վերահսկողություն երկրում գործող կուսակցությունների ֆինանսների, այդ թվում՝ նախընտրական քարոզարշավների ֆինանսավորման նկատմամբ: Ուղեցույցը կարող է նաև օգտակար լինել հենց կուսակցությունների համար՝ օգնելու նրանց դրսևորել առավել պատասխանատու վարքագիծ հանրության առջև, բարելավելու իրենց ֆինանսական հաշվետվողականությունը և փոխադարձաբար վերահսկելու միմյանց գործունեության օրինականությունը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կուսակցությունների ֆինանսավորման (այլ կերպ՝ նաև քաղաքական ֆինանսավորման) ոլորտն ընդունված է դիտարկել երկու հիմնական տեսանկյունից՝ կուսակցությունների **ընթացիկ ֆինանսավորումը** և **քարոզարշավների ֆինանսավորումը**:

- **Ընթացիկ ֆինանսավորումը** ներառում է կուսակցության եկամուտները, ծախսերը և նրան պատկանող գույքը՝ անկախ որևէ ժամանակային կամ այլ համատեքստի:
- **Քարոզարշավի ֆինանսավորումը** վերաբերում է նախընտրական գործընթացներում կուսակցությունների ստացած ու ծախսած գումարներին և օգտագործվող գույքին: Այստեղ նաև հաշվի է առնվում վարչական ռեսուրսի հնարավոր չարաշահումը, որը կարող է խաթարել քաղաքական ուժերի մրցակցությունը և վտանգել ընտրական գործընթացների բարեվարքությունը, օրինականությունը, արդարությունը և քաղաքացիների ազատ կամարտահայտումը:

Կուսակցությունների ֆինանսավորման հարցերին ուղղակի կամ անուղղակի կերպով անդրադարձ կա տարբեր միջազգային փաստաթղթերում, ինչը ձևավորում է համապատասխան պարտավորություններ դրանց մասնակից պետությունների համար՝ կարգավորելու ոլորտը, նվազեցնելու կոռուպցիոն ռիսկերը և ապահովելու մրցակցային քաղաքական միջավայր: Այսպես,

- Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը»[1] նշում է, որ յուրաքանչյուր քաղաքացի պետք է իրավունք և հնարավորություն ունենա մասնակցելու պետական գործերը վարելուն՝ ինչպե՛ս անմիջականորեն, այնպե՛ս էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով, քվեարկել և ընտրվել իրական պարբերական ընտրություններում, որոնք անց են

1 ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր, 16.12.1966 թ., arlis.am/DocumentView.aspx?docID=18500

կացվում համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ և ապահովում են ընտրողների կամքի ազատ արտահայտումը: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից տվյալ դրույթի մեկնաբանությունը[2] նշում է, որ կուսակցությունների նախընտրական քարոզարշավի ծախսերի ողջամիտ սահմանափակումները կարող են արդարացված լինել, եթե անհրաժեշտ է երաշխավորել, որ ընտրողների ազատ ընտրությունը չտուժի և ժողովրդավարական գործընթացը չխաթարվի որևէ կուսակցության կամ թեկնածուի անհամաչափ ծախսերի պատճառով:

- ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիան»[3] առաջարկում է, որ մասնակից պետությունները ձեռնարկեն անհրաժեշտ իրավական և վարչական միջոցառումներ՝ մեծացնելու հանրային ընտրովի պաշտոնների թեկնածուների և կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը:
- Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդակցության (ԵԱՀԽ, ներկայումս՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն, ԵԱՀԿ) մարդկային չափման Կոպենհագենի խորհրդաժողովի փաստաթուղթն[4] ընդգծում է պետության և քաղաքական կուսակցությունների հստակ տարանջատումը և կուսակցությունների՝ պետության հետ սերտաճման բացառումը, ինչպես նաև կուսակցությունների հավասար մրցակցության համար անհրաժեշտ իրավական երաշխիքների ստեղծման անհրաժեշտությունը:
- Եվրոպայի խորհրդի (ԵԽ) «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» (Վենետիկի) հանձնաժողովն իր «Ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսի չարաշահման մասին»

2 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 25-րդ հոդվածի մեկնաբանությունը, 12.07.1996 թ., https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/TBSearch.aspx?Lang=en&TreatyID=8&DocTypeID=11

3 ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիա», 31.10.2003 թ., վավերացվել է ՀՀ կողմից 07.04.2007 թ., https://www.unodc.org/documents/brussels/UN_Convention_Against_Corruption.pdf

4 Conference for Security and Co-operation in Europe, Document of the Copenhagen Meeting of the Conference on the Human Dimension, https://www.osce.org/files/f/documents/9/c/14304.pdf, 29.06.1990, կետեր 5.4 և 7.6:

զեկույցում[5] սահմանում է «վարչական ռեսուրսը» (ներառյալ՝ ֆինանսական և նյութական) և «վարչական ռեսուրսի չարաշահումը»՝ շեշտելով, որ դա կարող է խաթարել ընտրական գործընթացներում հավասարության սկզբունքը, ինչպես նաև ընտրողի՝ կարծիք ձևավորելու ազատությունը:

5 European Commission for Democracy through Law (Venice Commission), Preventing and responding to the misuse of administrative resources during electoral processes, 2016, https://www.venice.coe.int/images/GBR_2016_Guidelines_resources_elections.pdf

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Օրենսդրություն և իրավասու մարմիններ

Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) կուսակցությունների ֆինանսավորման և դրա թափանցիկության ու վերահսկողության հարցերը հիմնականում կարգավորում են հետևյալ իրավական ակտերով.

- ՀՀ Սահմանադրություն, որն ամրագրում է, որ կուսակցություններն իրենց ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հրապարակում են տարեկան հաշվետվություններ (այսուհետ՝ տարեկան հաշվետվություն).[6]
- «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք,[7] որը նախատեսում է կուսակցությունների ֆինանսավորման նկատմամբ ընդհանուր վերահսկողություն, ներառյալ՝ տարեկան հաշվետվության ստուգում.
- «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենք,[8] որը սահմանում է նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման և դրա թափանցիկության պահանջները:

Այսպիսով, կուսակցությունների ֆինանսավորման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է երկու մարմին, որտեղ՝

- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ ԿԿՀ) «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի և «Կոռուպցիայի

6 ՀՀ Սահմանադրություն, հոդված 46, մաս 3

7 «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=166242

8 «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=105967

կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի[9] համաձայն իրականացնում է ընդհանուր վերահսկողություն կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ, այդ թվում՝

- ստուգում է կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների, ծախսերի և գույքի մասին տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը.
- կազմակերպում է օրենքի համաձայն պարտադիր աուդիտի ենթակա կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտը, ներառյալ՝ աուդիտորական կազմակերպությունների ընտրությունը.
- քննում և լուծում է կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը.
- սահմանում է կուսակցությունների ղեկավար մարմինների հայտարարագրման կարգը, հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանությունը և ռիսկային չափորոշիչները, վարում է հայտարարագրերի հաշվառման ռեեստրը:

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (այսուհետ՝ ԿԸՀ), մասնավորապես՝ դրա Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը (այսուհետ՝ ՎՎԾ) ՀՀ ընտրական օրենսգրքի և ԿԸՀ 2016 թվականի հունիսի 17-ին «Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության գործունեության կարգը սահմանելու մասին» 39-Ն որոշման[10] համաձայն իրականացնում է նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողություն, այդ թվում՝

Նախընտրական հիմնադրամների գործունեությունը ՀՀ Ազգային ժողովի և Երևանի ընտրությունների դեպքում ստուգվում է ԿԸՀ, իսկ այլ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում՝ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (այսուհետ՝ ԸԸՀ) կողմից:

9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172271

10 ԿԸՀ 2016 թ. հունիսի 17-ի «Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության գործունեության կարգը սահմանելու մասին» 39-Ն որոշում, https://res.elections.am/images/dec/16.39_N.pdf

- ստուգում է կուսակցությունների՝ ընտրությունների նպատակով բացված նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի համապատասխանությունը օրենսդրության պահանջներին, ստուգման արդյունքներով կազմում է եզրակացություն.
- ստուգում է ընտրություններին մասնակից կուսակցությունների և թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրերը:

Կուսակցությունների ֆինանսավորման սահմանված կանոնների քրեաիրավական խախտումները քննվում են իրավապահ մարմինների՝ ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից՝ ՀՀ գլխավոր դատախազության հսկողության ներքո:

Վարչական և քրեական գործերով արդարադատությունն իրականացվում է համապատասխան դատարանների կողմից:

Կուսակցությունների ֆինանսավորման սահմանված կանոնների խախտումների համար վարչական ու քրեական օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությունը տեսակները և դրանց քննության համար իրավասու մարմինների շրջանակը ներկայացված է Հավելված 1-ում՝ կազմված ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղի կողմից:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

- **Կուսակցությունը կարող է բանկային հաշիվներ ունենալ միայն ՀՀ տարածքում գործող բանկերում:**
- **Կուսակցությանը և կուսակցության կողմից կատարվող դրամական փոխանցումները պետք է լինեն բացառապես անկանխիկ:**
- **Դրամական փոխանցում կատարող անձինք պետք է նշեն իրենց անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի համարը:**

Մուտքեր (եկամուտներ)

Հայաստանում կուսակցությունների ֆինանսավորումը լինում է **մասնավոր** և **պետական**.

- **Մասնավոր** ֆինանսավորումը ներառում է կուսակցության անդամների և համակիր ֆիզիկական անձանց կողմից տրվող նվիրատվությունները, ինչպես նաև կուսակցության այլ գործունեությունից ստացված եկամուտը, օրինակ՝ իր գույքի վաճառքից կամ վարձակալությունից, իր կողմից հիմնած ՀԼՄ-ներից և հրատարակչություններից:
- **Պետական ֆինանսավորման** նպատակն է աջակցել երկրում կուսակցական համակարգի կայացմանը, այդ թվում՝ նվազեցնելով հանրային որոշակի վստահություն արձանագրած կուսակցությունների կախվածությունը մասնավոր խոշոր ֆինանսավորողներից, ավելացնելով նրանց ինքնուրույնությունը և հարաբերականորեն շտկելով մրցակցային միջավայրը:

1. Մասնավոր ֆինանսավորում[11]

Մասնավոր ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են՝

- մուտքի վճարները,
- անդամավճարները,
- նվիրատվությունները,
- կուսակցության հիմնադրած զանգվածային լրատվության միջոցների (այսուհետ՝ ՀԼՄ) և հրատարակչություններից ստացված շահույթը,
- վարկերը, փոխառությունները, բանկային ավանդների գծով ստացված տոկոսները,
- կուսակցության այլ գործունեությունից ստացված եկամուտները:

Մուտքի վճարներ

Մուտքի վճարը կուսակցության անդամ դառնալու համար մուծվող միանվագ գումարն է, որը կարող է նախատեսված լինել կուսակցության կանոնադրությամբ: ՀՀ օրենսդրությամբ մուտքի վճարների համար առանձին նախատեսված չէ առավելագույն սահմանաչափ:

11 «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք, հոդվածներ 23, 24, 25

Անդամավճարներ

Անդամավճարը կուսակցության անդամ լինելու համար մուծվող պարբերական վճարն է, որը կարող է նախատեսված լինել կուսակցության կանոնադրությամբ: Կուսակցության մեկ անդամից գանձվող անդամավճարը մեկ տարում չի կարող գերազանցել 1,000,000 ՀՀ դրամը:

Նվիրատվություններ

Նվիրատվությունը **ներառում է՝**

- ֆիզիկական անձանց կողմից կատարվող ուղիղ դրամական փոխանցումները,
- կուսակցության պարտքի ներումը պարտատիրոջ կամ մարումը երրորդ անձի կողմից,
- կուսակցության օգտին անհատույց աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը, կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցումը, օգտագործման հանձնումը կամ նույն կամ համանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գործող շուկայական արժեքից էականորեն ցածր գնով, կուսակցության օգտին աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման կամ կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցման կամ վարձակալության հանձնելու հետևանքով կուսակցության մոտ ձևավորված խնայողությունը (բնեղենով նվիրատվությունը):

Մեկ անձը կարող է նվիրատվություն անել մեկից ավել՝ անսահմանափակ քանակով կուսակցությունների, չնայած որ անդամակցել կարող է միայն մեկին:

Գործող շուկայական արժեքից տարբերվող գինը համարվում է էականորեն ցածր, եթե այն տարբերվում է նվազագույնը 20%-ը գերազանցող չափով:

Նվիրատվություն **չեն համարվում՝**

- կամավորների կողմից անձնական գույքի օգտագործմամբ (բացառությամբ տրանսպորտային միջոցների և անշարժ գույքի) կատարված աշխատանքը կամ ծառայությունների մատուցումը,
- տեղական կամ միջազգային համագործակցության շրջանակներում կուսակցությանն ու նրա անդամներին ուսումնառության, վերապատրաստման, համաժողովներին, սեմինարներին և նմանատիպ այլ միջոցառումներին մասնակցության նպատակով հատկացված համապատասխան ողջամիտ ծախսերը:

Կուսակցություններին կատարվող դրամական փոխանցումների համար նախատեսված են սահմանափակումներ: Դրանք կիրառվում են նաև բնեղենով նվիրատվությունների դեպքում, որտեղ հաշվարկվում են նվիրատվության շուկայական արժեքի հիման վրա:

Կամավորական աշխատանք չի համարվում աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը, եթե դրանց կատարման համար պահանջվում է որոշակի մասնագիտական որակավորում, դրանց դիմաց աշխատանք կատարողը կամ ծառայություններ մատուցողը այլ դեպքերում սովորաբար ստանում է հատուցում, և աշխատանքի կամ ծառայության մատուցման տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը:

Այդ ծառայությունները համարվում են բնեղենով նվիրատվություն և ներառվում են նվիրատվությունների սահմանված առավելագույն սահմանաչափում:

Աղյուսակ 1. Նվիրատվությունների տարեկան սահմանաչափեր

Տարեկան սահմանաչափ անձի համար (ՀՀ դրամ)	Տարեկան սահմանաչափ կուսակցության համար (ՀՀ դրամ)
Փոխանցումները բոլոր կուսակցություններին՝ մինչև 2,500,000	Ֆիզիկական անձանցից ստացված բոլոր փոխանցումները՝ մինչև 500,000,000

Նվիրատվություն **չի թույլատրվում՝**

- պետական և համայնքային բյուջեներից
- իրավաբանական անձանցից (կազմակերպություններից)
- պետական և համայնքային կազմակերպություններից
- օտարերկրյա պետություններից
- Հայաստանի քաղաքացիություն չունեցող անձանցից
- անանուն անձանցից:

Աղյուսակ 1-ում նշված սահմանաչափը գերազանցող գումար ստանալու դեպքում կուսակցությունը պարտավոր է 2 շաբաթվա ընթացքում գերազանցող մասը կամ նվիրատվությունն ամբողջությամբ վերադարձնել փոխանցողին, իսկ դրա անհնարին լինելու դեպքում՝ գումարը փոխանցել պետական բյուջե: Բնեղենով նվիրատվության սահմանաչափը գերազանցելու դեպքում նվիրատվության գերազանցող մասը կամ դրա համարժեք գումարը վերադարձվում է նվիրատուին կամ փոխանցվում պետական բյուջե:

Նշված խախտումներով ստացված գումարը չվերադարձնելու կամ պետական բյուջե չվերադարձնելու դեպքում նախատեսվում է վարչական տուգանք կուսակցության և կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ:

Չթույլատրված աղբյուրներից կատարված դրամական փոխանցումների դեպքում կուսակցությունը 2 շաբաթում ստացված գումարը փոխանցում է պետական բյուջե:

Գործնականում ներկայացված սահմանափակումներն ու կարգավորումները խախտվում և շրջանցվում են: Այդպիսի դրսևորումների օրինակներ են՝

- կանխիկ գործարքները, այդ թվում՝ մուտքի վճարների, անդամավճարների ու նվիրատվությունների առձեռն փոխանցումը կուսակցություններին, կուսակցության հաշվեհամարից կանխիկացումը, կանխիկով կատարվող ծախսերը, գույքի վարձակալության, առքուվաճառքի պայմանագրերում ֆիքսված գումարից բացի էականորեն ցածր կամ բարձր կանխիկ միջոցների փոխանցումը,
- նվիրատվությունների սահմանաչափերում մնալու նպատակով խոշոր գումարի մասնատումը և կուսակցության հաշվեհամարին մուտքագրումը մի քանի ֆիզիկական անձանց կողմից,
- այլ ֆիզիկական անձանց տվյալների օգտագործումը, այդ թվում՝ առանց վերջիններիս տեղյակ լինելու և/կամ համաձայնության, ընդ որում շրջանցվում են սահմանաչափերը և իրական նվիրատուները մնում են չբացահայտված,
- իրավաբանական անձանց կողմից ֆիզիկական անձանց միջոցով փոխանցումները,
- օտար երկրներից քաղաքացիների կամ կազմակերպությունների կողմից ՀՀ քաղաքացիների տվյալներն օգտագործելով ֆինանսական միջոցների ուղղումը կուսակցություններին,
- կուսակցությունների կողմից ոչ թույլատրելի աղբյուրներից ստացված և/կամ սահմանաչափերը գերազանցող միջոցները նվիրատուին կամ պետական բյուջե չվերադարձնելը:

Կուսակցության հիմնադրած ԶԼՄ-ներից և հրատարակչություններից ստացած շահույթը

Հայաստանում կուսակցությունները կարող են հիմնել ԶԼՄ-ներ և հրատարակչություններ և դրանցում ունենալ շահաբաժիններ: ԶԼՄ-ներից և հրատարակչություններից ստացվող եկամուտը կարող է փոխանցվել կուսակցությանը, որն իրավասու է այն օգտագործել միայն կուսակցության կանոնադրությամբ և ծրագրով սահմանված նպատակների համար:

Վարկեր, փոխառություններ և ավանդներ

Կուսակցությունները կարող են իրենց գործունեությունը ֆինանսավորելու համար ստանալ վարկեր Հայաստանի տարածքում գործող բանկերից, վարկային կազմակերպություններից: Նրանք նաև կարող են ներգրավել փոխառություններ և ներդնել ավանդներ:

Թե՛ վարկերի, թե՛ ավանդների դեպքում տոկոսադրույքներն ու պայմանները պետք է համապատասխանեն շուկայում գործող սովորական պայմաններին և արտոնություններ չընձեռեն առանձին կուսակցությունների:

Կուսակցության սեփականությունից ստացվող եկամուտ

Կուսակցությունները կարող են ստանալ եկամուտ իրենց սեփականությունը հանդիսացող գույքը՝ գրասենյակ, հողամաս, ավտոմեքենա և այլն, տնօրինելուց՝ վաճառելով կամ վարձակալության տրամադրելով գույքը: Վաճառքի կամ վարձակալության դեպքում գործարքների պայմանները պետք է համապատասխանեն շուկայում գործող գնային պայմաններին: Շուկայականի համեմատ էականորեն ավել գնով վաճառքի կամ վարձակալությամբ տալու դեպքում ավելցուկը դիտվում է որպես նվիրատվություն և ենթակա է վերադարձի՝ որպես բնեղեն նվիրատվություն:

Ինչպես և բնեղեն նվիրատվության դեպքում, այստեղ ևս շուկայականից էական բարձր է համարվում 20% և ավել գինը:

2. Պետական ֆինանսավորում[12]

Հայաստանում պետական ֆինանսավորում հատկացվում է այն կուսակցություններին, որոնք ՀՀ Ազգային Ժողովի վերջին ընտրությունների ժամանակ ստացել են ընտրողների ձայների առնվազն 2%-ը, իսկ կուսակցությունների դաշինքով (այսուհետ՝ դաշինք) ընտրություններին մասնակցելու պարագայում՝ 7%-ը: Դաշինքի կազմում ներառված կուսակցությունները պետական ֆինանսավորումը ստանում են հավասարաչափ, եթե դաշինքի ներսում այլ մոտեցում որոշված չէ:

Կուսակցություններին հատկացվելիք ֆինանսավորումը հաշվարկվում է ըստ Աղյուսակ 2-ում նկարագրված սանդղակի:

Եթե կուսակցության տարեկան հաշվետվությունում նշված ակտիվների արժեքը 5 անգամ ավել է բոլոր կուսակցությունների պետական ֆինանսավորման համար նախատեսված գումարից, ապա այդ կուսակցությանը պետական ֆինանսավորում չի հատկացվում:

Աղյուսակ 2. Կուսակցություններին հատկացվելիք պետական ֆինանսավորման չափը

Կուսակցության ստացած ձայները	Պետական ֆինանսավորումը՝ ստացված յուրաքանչյուր քվեի համար (ՀՀ դրամ)
2-5%	1,000 դրամ
5-20%	2-5%՝ 1,000 դրամ
	5-20%՝ 500 դրամ
>20%	2-5%՝ 1,000 դրամ
	5-20%՝ 500 դրամ
	մնացածը՝ 250 դրամ

Կուսակցությունների պետական ֆինանսավորումը բաղկացած է երկու մասից՝ **ընդհանուր** և **նպատակային ֆինանսավորում**:

Պետական **ընդհանուր ֆինանսավորումը** կուսակցությանը հատկացվելիք գումարի 60%-ն է և տրվում է ուղղակիորեն՝ առանց հավելյալ նախապայմանների՝ կիսամյակային սկզբունքով:

12 «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք. հոդված 26

Պետական **նպատակային ֆինանսավորումը** կազմում է հատկացվելիք գումարի 40%-ը, և տրվում է կուսակցության զարգացումը խթանելու նպատակով, միանվագ, երեք ուղղություններով՝ Աղյուսակ 3-ում ներկայացված հաշվարկի մեթոդով.

Աղյուսակ 3. Կուսակցությունների պետական ֆինանսավորման նպատակային բաղադրիչի հաշվարկը

Նպատակ / պայման	Օրենքի պահանջի ապահովման մակարդակ	Պետական նպատակային ֆինանսավորման չափ
Ղեկավար կազմում սեռերի ներկայացվածություն (%)	40-50%	50%
	20-40%	25%
	0-20%	0%
Տարածքային ներկայացվածություն (ստորաբաժանումներ մարզերում)	≥ 5 մարզում	25%
	≤ 4 մարզում	0%
Գաղափարախոսության, ծրագրային նպատակների և հանրային հարցերի մասին հետազոտություններ	առկա	25%
	0	0%

Սեռերի ներկայացվածություն. Եթե կուսակցությունների ղեկավար կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը ավել է 40%-ից, ապա կուսակցությանը տրամադրվում է ***պետական նպատակային ֆինանսավորման*** կեսը (հատկացվելիք ողջ պետական ֆինանսավորման 20%-ը): Եթե այդ թիվը 20-40% է, ապա կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման 25%-ը (հատկացվելիք ողջ պետական ֆինանսավորման 10%-ը): Եթե պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը քիչ է 20%-ից, ապա այս մասով կուսակցությանը ֆինանսավորում չի տրամադրվում:

Կուսակցությանը կարող է չհատկացվել ողջ հասանելիք պետական ֆինանսավորումն այն դեպքում, եթե այն նախորդ տարում իր գույքը հանձնել է վարձակալության կամ բանկային ավանդից ստացել է տոկոսներ կամ իր հիմնադրած ԶԼՄ-ի կամ հրատարակչության գործունեության արդյունքում ստացել է եկամուտ, որը գերազանցում է պետական ֆինանսավորմամբ նախատեսված գումարը: Եթե տվյալ գումարը չի գերազանցում կուսակցությանը հատկացվելիք գումարը, ապա այդ չափով պարզապես նվազեցվում է նրա պետական ֆինանսավորումը:

Կուսակցությունն ամբողջապես կամ մասամբ կարող է զրկվել հաջորդ տարվա նպատակային ֆինանսավորումից, եթե վերահսկող մարմինը՝ ԿԿՀ-ն, գտնի, որ կուսակցությունը չի կատարել կամ մասամբ է կատարել օրենքով սահմանված պահանջները:

Տարածքային ներկայացվածություն. Եթե կուսակցությունը տարվա ընթացքում ունեցել է տարածքային ստորաբաժանումներ Հայաստանի մարզերի առնվազն կեսում, ապա կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման 25%-ը (հատկացվելիք պետական ֆինանսավորման 10%-ը): Հակառակ դեպքում այս մասով գումար չի տրամադրվում:

Կուսակցության ղեկավար կազմում սեռային հավասար ներկայացվածության և կուսակցության տարածքային ներկայացվածության մասին տեղեկատվությունը կարելի է գտնել կուսակցության կանոնադրության մեջ և/կամ կուսակցության ղեկավար կազմի որոշումներում:

Նպատակային ֆինանսավորման այս հատվածը կուսակցությանը տրամադրվում է ոչ միայն կանանց, այլև երիտասարդներին, հաշմանդամություն ունեցող անձանց և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին կուսակցության գործունեության մեջ ներգրավելուն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով:

Գաղափարախոսության, ծրագրային նպատակների և հանրային քաղաքականության հարցերի մասին հետազոտություններ. Եթե կուսակցությունն իրականացրել, հրապարակել և տարածել է կուսակցության գաղափարախոսության, ծրագրային նպատակների և հանրային քաղաքականության հարցերի մասին հետազոտություններ, ապա կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման 25%-ը (հատկացվելիք ողջ պետական ֆինանսավորման 10%-ը): Հակառակ դեպքում այս մասով գումար չի տրամադրվում:

Նպատակային ֆինանսավորման բաղադրիչների դեպքում կարող են տեղ գտնել որոշ չարաշահումներ, որոնք առավել հավանական են լիազոր մարմնի թույլ վերահսկողության պարագայում: Օրինակ՝ կուսակցությունները կարող են՝

- ձևականորեն ապահովել սեռային ներկայացվածություն, սակայն ստացվող պետական նպատակային ֆինանսավորումը չուղղել կանանց, երիտասարդներին, հաշմանդամություն ունեցող անձանց և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին իրենց կուսակցության գործունեության մեջ ներգրավելուն ուղղված միջոցառումներին,
- մարզերում բացել գրասենյակներ, սակայն տեղում փաստացի չծավալել որևէ գործունեություն:

Գույք[13]

Կուսակցությունն իր կանոնադրությամբ սահմանված և ծրագրով նախատեսված նպատակների իրականացման համար սեփականության կամ այլ գույքային իրավունքով կարող է ունենալ, այդ թվում՝ ձեռք բերել, օտարել և տնօրինել անշարժ և շարժական գույք: Սա ներառում է կուսակցություններին տրվող բնեղենով նվիրատվությունները:

Կարևոր է տարանջատել կուսակցության գույքն ու պարտավորությունները կուսակցությունների անդամների գույքից ու պարտավորություններից:

> **Կուսակցության անդամը սեփականության իրավունք չունի կուսակցությանը պատկանող գույքի նկատմամբ:**
>
> **Կուսակցության գույքի նվիրատվությունն արգելվում է՝ բացառությամբ որոշ դեպքերի:**
>
> **Կուսակցությունն իր գույքով պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, իսկ կուսակցության անդամը իր գույքով պատասխանատվություն չի կրում կուսակցության պարտավորությունների համար:**

Ելքեր[14]

Կուսակցությունների ծախսերը կարող են ներառել աշխատանքի և ստացվող ծառայությունների վարձատրությունը, հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների մուծումը, գրասենյակային ու կոմունալ ծախսերը, գույքային գործարքների ծախսերը, տրանսպորտային, հետազոտությունների, հանդիպումների և այլ ծախսերը:

13 «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք . հոդվածներ 23, 27

14 Նույն տեղում, հոդված 27

Հաշվետվողականության մեխանիզմներ

Կուսակցությունների ընդհանուր հաշվետվողականությունն ապահովելու համար նախատեսված է կուսակցությունների գործունեության տարեկան հաշվետվության ներկայացում:

Առավել կայացած մի խումբ (ԱԺ ընտրություններին առավել ձայն ստացած ու պետական ֆինանսավորում, ինչպես նաև՝ 25 մլն ՀՀ դրամը գերազանցող մուտք կամ ելք ունեցող) կուսակցությունների հաշվետվությունները ենթակա են պարտադիր աուդիտի:

Բացի այդ, կուսակցություններում կոռուպցիոն ռիսկերը վերհանելու և կառավարելու նպատակով նաև ներդրվել է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրման պարտականություն:

1. Տարեկան հաշվետվություններ

Կուսակցության տարեկան հաշվետվությունն ամենաընդգրկուն փաստաթուղթն է, որը ներկայացնում է կուսակցության գործունեությունը և ֆինանսական վիճակը վերջին տարվա ընթացքում, որի վերլուծությամբ հնարավոր է ընդհանուր գծերով ծանոթանալ կուսակցության գործունեությանը:

Կուսակցություններն իրենց տարեկան հաշվետվությունները՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ տվյալներով հրապարակում են մինչև հաջորդող տարվա մայիսի 31-ը՝ www.azdarar.am կայքում: Հրապարակելուց հետո 3 օրվա ընթացքում նրանք պետք է տարեկան հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը ներկայացնեն ԿԿՀ:

Տարեկան հաշվետվությունների ձևը և ներկայացման կարգը սահմանված է ԿԿՀ 2022 թ. հուլիսի 22-ի 04-Ն որոշմամբ,[15] որը մանրա-

15 ԿԿՀ 2022 թ. հուլիսի 22-ի «Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը, հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես նաև տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու կարգը սահմանելու մասին» 04-Ն որոշում, https://www.arlis.am/documentview.aspx?docid=166518

մասն նկարագրում է, թե ի՞նչ տեղեկատվություն, ի՞նչ ձևաչափով և ի՞նչ հերթականությամբ է պետք լրացնել:

Տարեկան հաշվետվություններն ունեն հետևյալ կառուցվածքը.

1. «Ընդհանուր» թերթ, որտեղ լրացվում են՝
   - Ընդհանուր տեղեկությունները
   - Ղեկավար անձնակազմի վերաբերյալ տեղեկությունը
   - Տարածքային ստորաբաժանումների վերաբերյալ տեղեկությունը
   - Հետազոտությունների մասին տեղեկությունը

2. «Մուտքեր ելքեր» թերթը, որտեղ լրացվում են՝

   Մուտքեր
   - Պետական ֆինանսավորումը
   - Նվիրատվությունները
   - Բնեղենով նվիրատվությունները
   - Մուտքի վճարները
   - Անդամավճարները
   - Կուսակցության անշարժ գույքի վաճառքից մուտքերը
   - Կուսակցության անշարժ գույքի վարձակալության հանձնումից մուտքերը
   - Ստացված վարկերը և փոխառությունները
   - Բանկային ավանդների գծով ստացված տոկոսները
   - Կուսակցության հիմնադրած ընկերությունների կողմից՝ կուսակցությանը փոխանցած միջոցների (շահաբաժինների) ընդհանուր գումարի չափը.
   - Այլ մուտքերը

   Ելքեր
   - Աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարները

Պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունները նշված երեք ուղղություններով իրավիճակի և կատարված աշխատանքների մասին հաշվետվություն պետք է ներկայացնեն առանձին հավելվածով:

Եթե հաշվետու տարվա ընթացքում կուսակցությունը փաստացի գործունեություն չի ծավալել, դրամական կամ ոչ դրամական միջոցների հոսքեր չեն եղել, լրացվում է միայն «Ընդհանուր» թերթը և կատարվում է համապատասխան նշում՝ հաշվետու տարվա ընթացքում ընթացիկ ֆինանսական գործունեություն չծավալելու, գույք չօգտագործելու, ծրագրեր չիրականացնելու, դրամական կամ ոչ դրամական հոսքեր չունենալու վերաբերյալ:

- Հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարների ընդհանուր գումարի չափը
- Կոմունալ վճարները
- Գույքի վարձակալության վճարները
- Անշարժ գույքի ձեռքբերման վճարը
- Տրանսպորտային միջոցների ձեռքբերման վճարը
- Ապրանքանյութական արժեքների ձեռքբերման վճարը
- Տրանսպորտային ծախսերի գծով վճարները
- Գործուղման ծախսերի գծով վճարները
- Այլ ելքերը

Հայաստանում կուսակցությունները նշված ոչ բոլոր ուղղություններով են կատարում ծախսեր, կամ առնվազն՝ նշում դրանց մասին տարեկան հաշվետվություններում:

Կուսակցությունների կողմից ներկայացված հիմնական ծախսերը կատարվել են գույքի վարձակալության, հարկերի, տուրքերի, վճարները և աշխատանքի վարձատրության, ծառայությունների մատուցման վճարների նպատակով:

Պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունները հաշվետվության հետ առանձին հավելվածով ներկայացնում են տեղեկատվություն պետական ֆինանսավորման երեք բաղադրիչներով կատարված աշխատանքների և փաստական տվյալների մասին:

3. «Գույք» թերթը, որտեղ լրացվում են՝
- Անշարժ գույքի հասցեն
- Տարվա ընթացքում անշարժ գույքի ձեռքբերման և օտարման գործարքները
- Անշարժ գույքի ձեռքբերման արդյունքում հաշվարկված ոչ դրամային մուտքերը
- Տարեվերջի դրությամբ առկա տրանսպորտային միջոցները
- Տարվա ընթացքում տրանսպորտային միջոցների ձեռքբերման և օտարման գործարքները

4. «Պարտավորություններ» թերթը, որտեղ լրացվում են՝
- Բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների մասին տվյալները
- Ստացված փոխառությունների մասին տվյալները
- Կրեդիտորական պարտքերի մասին տեղեկությունը
- Այլ պարտավորությունների հանրագումարը:

Տարեկան հաշվետվությունների բովանդակությունն առավել մանրամասն ներկայացված է Հավելված 2-ում:

2. Ֆինանսական աուդիտ[16]

Հայաստանում պետական ֆինանսավորում ստացող և 25 մլն դրամը գերազանցող մուտքեր կամ ելքեր ունեցող կուսակցությունները ենթակա են պարտադիր աուդիտի: Պետությունը կազմակերպում է աուդիտի գործընթացը՝ նպատակ ունենալով ստանալ արտոնագրված կազմակերպությունների մասնագիտական եզրակացությունը նշված կուսակցությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների՝ օրենքի պահանջներին համապատասխանության և արժանահավատության վերաբերյալ:

Մուտքերում չի հաշվարկվում կուսակցության հիմնադրած ՀԼՄ-ների և հրատարակչությունների շահույթը, այլ ներառվում են միայն՝ ՀԼՄ-ներից և հրատարակչություններից կուսակցությանը փոխանցված միջոցները:

Այս պահանջը չի բացառում կուսակցությունների՝ սեփական միջոցներով կամավոր աուդիտի իրականացումը:

Պարտադիր աուդիտի ենթակա լինելու հանգամանքը պարզելու համար կուսակցությունները մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 31-ը ԿԿՀ են ներկայացնում տեղեկություններ իրենց մուտքերի, ելքերի, գույքի և պարտավորությունների մասին՝ ըստ սահմանված ձևաթղթի:[17] Աուդիտի ենթակա կուսակցությունների ցանկը հստակեցնելուց հետո ԿԿՀ-ն սահմանված կարգով[18] բաց մրցույթի միջոցով ընտրում է աուդիտորական կազմակերպությունների:

Աուդիտի արդյունքում կազմված աուդիտորական ընկերության եզրակացությունները հրապարակվում են ԿԿՀ կայքում:

Կուսակցությունը աուդիտորական եզրակացությունը տարեկան հաշվետվության հետ միաժամանակ հրապարակում է azdarar.am կայքում:

16 «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք. հոդված 28, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենք. հոդվածներ 3, 6, 7

17 ԿԿՀ 2024 թ. հունվարի 29-ի «Կուսակցությունների՝ հաշվետու տարվան հաջորդող յուրաքանչյուր տարում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացվող տարեկան հաշվետվության պարտադիր աուդիտի ենթակա լինելու հանգամանքը պարզելու, ինչպես նաև աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար հայտարարվող բաց մրցույթի կազմակերպման նպատակով ներկայացվող անհրաժեշտ տեղեկությունների ցանկը, ձևաթուղթը և ժամկետները սահմանելու մասին» 01-Ն որոշում, https://www.arlis.am/documentview.aspx?docID=189490

18 ԿԿՀ 2022 թ. հունիսի 17-ի «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» 02-Ն որոշում, https://www.arlis.am/documentview.aspx?docid=164524

Դրանց հիման վրա հաշվարկվում և տրամադրվում է կուսակցություններին հասանելիք պետական ֆինանսավորման նպատակային բաղադրիչը:

Աուդիտը կազմակերպվում է պետական բյուջեի հաշվին, իսկ պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունների դեպքում՝ պետական ընդհանուր ֆինանսավորման բաղադրիչի հաշվին:

Գործնականում առկա են իրավիճակներ, երբ կուսակցությունները ներկայացնում են տարեկան հաշվետվությունները սահմանված ժամկետից ուշ: Գրանցվում են նաև դեպքեր, երբ կուսակցություններն առհասարակ տարեկան հաշվետվությունները չեն ներկայացնում: Նույնը վերաբերում է պարտադիր աուդիտի եզրակացությանը: Բացի այդ, առկա են իրավիճակներ, երբ կուսակցությունները տարեկան հաշվետվությունները ներկայացնում են դատարկ, թերի կամ ոչ սահմանված ձևաչափով:

3. Կուսակցության ղեկավար մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրեր[19]

Կուսակցության ֆինանսների վերահսկողության առումով կարևոր է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների կարողության նկատմամբ ուշադրությունը՝ նվազեցնելու կոռուպցիոն և այլ ապօրինի գործողությունների ռիսկերը, օրինակ՝ կուսակցություններին նվիրատվություն կատարելու իրավունք չունեցող անձանց կողմից կուսակցության ղեկավար կազմի ներկայացուցիչներին ֆինանսավորելը, վերջիններիս ապօրինի հարստացումը կուսակցության միջոցների հաշվին և այլն:

Ղեկավար մարմնի անդամները հայտարարագրերը ներկայացնում են տարեկան, ինչպես նաև կուսակցությունում պաշտոնը ստանձ-

19 «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 28.1

նելիս և դադարեցնելիս, որոնք հրապարակվում են ԿԿՀ կայքէջում: Եթե կուսակցության ղեկավար մարմնի անդամները միաժամանակ հանրային պաշտոն զբաղեցնելու բերումով արդեն իսկ պարտավոր են ներկայացնել գույքի, եկամուտների ու շահերի հայտարարագիր, ապա ազատվում են կուսակցության ղեկավար անդամ լինելու համար նախատեսված հայտարարագիր ներկայացնելու պարտավորությունից:

Եթե միաժամանակ հանրային և կուսակցական պաշտոններ զբաղեցնող անձը նույն հերթականությամբ նույն տարում դադարում է զբաղեցնել այդ պաշտոնները, ապա ներկայացնում է երկու հայտարարագիր յուրաքանչյուր պաշտոնի համար:

Կուսակցությունների ղեկավար մարմնի անդամ դառնալու կամ անդամությունը դադարեցնելու որոշումների դեպքում, 3-օրյա ժամկետում ԿԿՀ-ն պետք է ծանուցվի այդ մասին՝ ներկայացնելով համապատասխան որոշման պատճենները:

Օրենքը հստակ չի սահմանում ԿԿՀ-ին ծանուցում ներկայացնող սուբյեկտին (կուսակցության ղեկավար մարմնի անդամ, ղեկավար մարմին, թե ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր), ուստի տվյալ դրույթը պատշաճ չի գործում:

Հայտարարագրի ձևը սահմանված է ԿԿՀ որոշմամբ,[20] որը ներառում է կուսակցության ղեկավար մարմնի անդամի գույքի և եկամուտների մասին, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների, մերձավոր ազգակցությամբ և խնամիությամբ կապված անձանց մասին տեղեկություններ ներկայացնելու պահանջը:

Մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք են համարվում անձի ամուսինը, ծնողը, զավակը, եղբայրը, քույրը, ամուսնու ծնողը, զավակը, եղբայրը և քույրը:

Հայտարարագրերում ներառվում են տեղեկություններ հետևյալի մասին.

- անշարժ գույք,
- տրանսպորտային միջոցներ,
- արժեթղթեր և այլ ներդրումներ,
- հանձնված և վերադարձված փոխառություններ, բանկային ավանդներ,

20 ԿԿՀ 2022 թ. հունիսի 17-ի «Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում, այդ մարմնի անդամների գույքի և եկամուտի հայտարարագրերի ձևանմուշները և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» 03-Ն որոշում, https://www.arlis.am/documentview.aspx?docid=164739

- թանկարժեք՝ չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույք,
- դրամական միջոցներ, այդ թվում՝ էլեկտրոնային հաշիվներ և կրիպտոարժույթ,
- եկամուտներ և դրանց աղբյուրներ:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Կուսակցությունների քարոզարշավի ֆինանսավորումը վերաբերում է ընտրություններին կուսակցությունների մասնակցության նպատակով հավաքագրվող եկամուտներին (մուտքերին) ու կատարվող ծախսերին (ելքերին):

Ընտրական գրավ[21]

Ընտրական գրավը նախընտրական հիմնադրամների ծախսերում ներառելու վերաբերյալ պահանջ ու կարգավորումներ առկա չեն, սակայն տրամաբանորեն ծախսը պետք է կատարվի կուսակցության ընթացիկ հաշվից և արտացոլվի կուսակցությունների տարեկան հաշվետվություններում:

Քարոզարշավի ֆինանսավորումը կուսակցությունների համար պաշտոնապես մեկնարկում է ընտրություններին մասնակցության հայտ ներկայացնելու պահից, երբ, ի թիվս գրանցման համար այլ պահանջների բավարարման, նրանք ԿԸՀ հաշվեհամարին են փոխանցում մասնակցության ընտրական գրավ, որը հաշվարկվում է ստորև աղյուսակում ներկայացված չափով:

Աղյուսակ 4. Ընտրական գրավի հաշվարկվող չափը

Ընտրությունների տեսակ	Ընտրական գրավի չափը (ՀՀ դրամ)
ԱԺ ընտրություններ	
Կուսակցությունների համար	7,500,000
Կուսակցությունների դաշինքների համար	15,000,000

21 «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, հոդվածներ 25, 84, 130

ՏԻՄ ընտրություններ	
4,001-10,000 ընտրող ունեցող համայնք	200,000
10,001-25,000 ընտրող ունեցող համայնք	500,000
25,001-70,000 ընտրող ունեցող համայնք	1,000,000
70,001-300,000 ընտրող ունեցող համայնք	1,500,000
300,000-ից ավել ընտրող ունեցող համայնքներ	3,000,000

Ընտրական գրավը դիմումի համաձայն վերադարձվում է կուսակցություններին, եթե՝

- կուսակցությունը/ դաշինքը մանդատ է ստացել,
- կուսակցությունը ստացել է 2% և ավելի քվե, իսկ դաշինքը ստացել է 4% և ավելի քվե,
- կուսակցությունը/դաշինքն ինքնաբացարկ է ներկայացրել մինչև կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցումը,
- ընտրության արդյունքներն անվավեր են ճանաչվել և նշանակվել է նոր ընտրություն:

Մուտքեր / նախընտրական հիմնադրամին նվիրատվություններ[22]

Կուսակցությունները և դաշինքները ընտրություններին մասնակցելու հայտի հաստատումից հետո 5 օրվա ընթացքում պետք է բացեն նախընտրական հիմնադրամի հաշվեհամար ԿԸՀ հրապարակած ցանկում նշված բանկերից որևէ մեկում, դրանում ներգրավեն միջոցներ և իրենց ընտրարշավն ամբողջապես իրականացնեն նախընտրական հիմնադրամի գումարներով:

Կուսակցությունների, դաշինքների կողմից նախընտրական հիմնադրամ չբացելու դեպքում կիրառվում է վարչական պատասխանատվություն:

Եթե կուսակցությունը կամ դաշինքը վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում չի բացում նախընտրական հիմնադրամ, ԿԸՀ-ն կամ համապատասխան ԸԸՀ-ն դիմում է դատարան՝ կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով:

22 Նույն տեղում, հոդվածներ 26, 92, 139

Կուսակցության և կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամի միջոցները կարող են ստացվել երեք աղբյուրներից՝

- կուսակցության կամ դաշինքի անդամ կուսակցությունների նվիրատվություններից,
- կուսակցության կամ դաշինքի ընտրական ցուցակի թեկնածուի նվիրատվություններից,
- ընտրելու իրավունք ունեցող անձանց նվիրատվություններից:

Նախընտրական հիմնադրամ կատարվող մուծումների համար կախված ընտրությունների տեսակից և նվիրատուից գործում են աղյուսակում ներկայացված սահմանափակումները:

Նախընտրական հիմնադրամներին կատարված նվիրատվությունները կապված չեն կուսակցությունների ընդհանուր ֆինանսավորման նվիրատվությունների սահմանաչափերի հետ և չեն ներառվում այդ հաշվարկներում:

Աղյուսակ 5. Նախընտրական հիմնադրամ մուծվող նվիրատվությունների սահմանաչափեր

Ընտրության տեսակը	Կուսակցության, դաշինքի կողմից կատարվող նվիրատվության առավելագույն գումարը (ՀՀ դրամ)	Թեկնածուի կողմից կատարվող նվիրատվության առավելագույն գումարը (ՀՀ դրամ)	Ֆիզիկական անձի կողմից կատարվող նվիրատվության առավելագույն գումարը (ՀՀ դրամ)
ԱԺ ընտրություն	800,000,000	հատուկ սահմանված չէ, նույնքան ինչքան ֆիզ. անձի համար՝ 5,000,000	5,000,000
Երևանի ավագանու ընտրություն	300,000,000	1,000,000	100,000
25,000 և ավելի ընտրող ունեցող այլ համայնքի ավագանու ընտրություն	60,000,000	500,000	100,000
Մինչև 25,000 ընտրող ունեցող համայնքի ավագանու ընտրություն	40,000,000	500,000	100,000

Հիմնադրամներից կատարվող բոլոր վճարումները կատարվում են անկանխիկ եղանակով:

ԱԺ ընտրությունների երկրորդ փուլի դեպքում կուսակցություններն ու դաշինքները իրավունք ունեն գործող սահմանաչափերի շրջանակում ներգրավել նոր միջոցներ, ինչպես նաև ծախսել նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները: Երկրորդ փուլի դեպքում կուսակցությունները, դաշինքները իրավունք ունեն ծախսելու 200 մլն ՀՀ դրամ:

Նախընտրական հիմնադրամ մուծումներ կատարող ֆիզիկական անձինք պարտավոր են նշել իրենց անուն-ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի համարը: Վերջինս հրապարակման ենթակա տվյալ չէ:

Եթե նախընտրական հիմնադրամ մուծումները անանուն են, չթույլատրված անձանցից կամ գերազանցում են առկա սահմանաչափերը, այդ գումարները փոխանցվում են պետական բյուջե:

Ելքեր / նախընտրական հիմնադրամի ծախսեր[23]

Կուսակցությունները նախընտրական քարոզչության նպատակներով ներգրավված միջոցներն հիմնականում ուղղում են հետևյալ գործողություններին, որոնք հետագայում առանձին ներկայացվում են նախընտրական հիմնադրամի հայտարարագրերում արտացոլվող ծախսերում՝

- ԶԼՄ-ներում նախընտրական քարոզչության ծախսեր,
- համացանցում նախընտրական քարոզչության ծախսեր,
- սոցիոլոգիական հարցումների և հետազոտությունների ծախսեր,
- դահլիճների, տարածքների վարձակալման ծախսեր ժողովների, ընտրողների հետ հանդիպումների այլ միջոցառումների համար,
- տարածքների վարձակալման ծախսեր ընտրական շտաբների համար,
- քարոզչական պաստառների, քարոզչական տպագիր և այլ նյութերի պատրաստման և տարածման հետ կապված ծախսեր,

23 Նույն տեղում, հոդվածներ 27, 92, 139

- տրանսպորտային միջոցների վարձակալության հետ կապված ծախսեր (չհաշված մինչև 7 տեղ ունեցող մարդատար մեքենաները),
- մշակութային կամ մարզական միջոցառումների անցկացման ծախսեր,
- վստահված անձանց տրվող փոխհատուցման ծախսեր, եթե մեկ անձին փոխհատուցման չափը անցնում է 10,000 ՀՀ դրամը

Եթե կուսակցությունը, դաշինքը վերոնշյալ ծախսերի ցանկից որևէ ծառայություն կամ ապրանք ստացել է որպես նվիրատվություն կամ շուկայական ցածր գնով, այն պետք է ներառվի նախընտրական հիմնադրամի ծախսերում:

Նախընտրական քարոզչության նպատակով վարձակալված տարածքների կոմունալ ծախսերը, ինչպես նաև նույն նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների վառելիքի հետ կապված ծախսերը կարող են չներառվել նախընտրական հիմնադրամում:

Քվեարկության օրվանից նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կատարվող բոլոր գործառնությունները դադարեցվում են:

Կուսակցությունները, դաշիքները կարող են դիմել վերահսկող մարմնին՝ ստանալու թույլտվություն, որպեսզի հիմնադրամից վճարումներ կատարեն նաև քվեարկության օրվանից հետո՝ մինչև քվեարկության օրը կատարված գործարքների համար:

Եթե նախընտրական հիմնադրամում քվեարկության օրվանից հետո մնացել են միջոցներ, ապա ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ մեկ շաբաթում, դրանք փոխանցվում են կուսակցության ընթացիկ հաշվին: Դաշինքի դեպքում մնացորդային միջոցները հավասարապես բաշխվում են դաշինքի մաս կազմող կուսակցությունների միջև, եթե այլ բան կուսակցությունների դաշինքը չի որոշել:

Ծախսերի սահմանաչափը գերազանցելու դեպքում կիրառվում է վարչական պատասխանատվության միջոց՝ տուգանք: Էականորեն մեծ շեղումների դեպքում ԿԸՀ դիմումի հիման վրա դատարանը կարող է ուժը կորցրած ճանաչել կուսակցության, դաշինքի ընտրական ցուցակի գրանցումը:

Ծախսերի դեպքում գործում են սահմանափակումներ, որոնք ներկայացված են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 6. Նախընտրական հիմնադրամի ծախսերի սահմանաչափը

Ընտրության տեսակը	Նախընտրական հիմնադրամի ծախսերի առավելագույն չափը (ՀՀ դրամ)
ԱԺ ընտրություն	800,000,000
ԱԺ ընտրությունների երկրորդ փուլ	200,000,000
Երևանի ավագանու ընտրություն	300,000,000
25,000 և ավելի ընտրող ունեցող համայնքի ավագանու ընտրություն	60,000,000
Մինչև 25,000 ընտրող ունեցող համայնքի ավագանու ընտրություն	40,000,000

Ինչպես և ընթացիկ ֆինանսավորման դեպքում, նախընտրական քարոզչության ժամանակ գործնականում լինում են կուսակցությունների կողմից կարգավորումների շրջանցման ռիսկեր և դեպքեր, ինչը դժվարացնում է վերահսկողությունը: Այսպես՝

- նախընտրական հիմնադրամներին նվիրատվություն կատարելու համար առկա սահմափակումներն ու սահմաչափերը շրջանցելու նպատակով նվիրատուներն օգտագործում են այլ անձանց տվյալներ,
- կուսակցությունները ծախսային գործարքները կատարում են կանխիկ և առանց համապատասխան պայմանագրային փաստաթղթերի,
- կուսակցությունները ամբողջովին կամ մասամբ նախընտրական հիմնադրամների հայտարարագրերից թաքցնում են կատարված նվիրատվություններն ու ծախսերը:

Խնդրահարույց ֆինանսավորում

1. Վարչական ռեսուրսների օգտագործում[24]

ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանափակված է նախընտրական քարոզարշավում վարչական ռեսուրսի օգտագործումը, որը ներառում է մարդկային, ֆինանսական և նյութական այն միջոցները, որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք, ինչը պայմանավորված է հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ:[25] Մի շարք պաշտոնատար անձանց արգելվում է նախընտրական քարոզչություն կազմակերպելը կամ կատարելը, ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը, նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսներն օգտագործելը: Այստեղ բացառություն են կազմում «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների ծախսերը:

> Ըստ Վենետիկի հանձնաժողովի վարչական ռեսուրսի չարաշահումը «քաղաքացիական ծառայողների, ինչպես նաև իշխող կուսակցությունների և թեկնածուների անօրինական վարքագիծն է՝ օգտագործելու իրենց պաշտոնեական դիրքը և կապերը պետական ինստիտուտների հետ՝ ընտրությունների արդյունքի վրա ազդելու նպատակով: Վարչական ռեսուրսների չարաշահումը անարդար առավելություն է տալիս իշխող կուսակցություններին և թեկնածուներին իրենց մրցակիցների հանդեպ՝ այդպիսով խաթարելով ընտրական գործընթացներում հավասարության սկզբունքը, ինչպես նաև ընտրողի՝ կարծիք ձևավորելու ազատությունը»:

Գործնականում, վարչական ռեսուրսի չարաշահումները, այդ թվում, օրինակ՝ պետական կամ համայնքային բյուջեից հատկացումները և ծախսերը, հանրային ծառայողների ի պաշտոնե ստացած և քարոզչության նպատակով օգտագործվող գրասենյակային կամ տրանսպորտային ծախսերը, քարոզչության մեջ ապօրինի ներ-

24 «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, հոդվածներ 19, 23

25 Նույն տեղում, հոդված 23

գրրավված հանրային ծառայողների վարձատրությունը, հանրային հեռուստատեսությամբ պաշտոնական գործունեության բերումով լուսաբանումների ծախսերը և այլ նման դրսևորումները փաստացի չեն ներառվում համապատասխան կուսակցությունների ֆինանսական (տարեկան կամ նախընտրական հիմնադրամի) հաշվետվություններում: Այդպիսով, չնայած մրցակցության խաթարման փաստին, դրանք, որպես կանոն, անտեսվում են համապատասխան վերահսկող կառույցի կողմից:

2. Երրորդ անձանց կողմից ֆինանսավորում[26]

Երրորդ անձանց կողմից ֆինանսավորումը վերաբերվում է այն անձանց ու կազմակերպությունների ներդրմանը, որոնք անմիջականորեն ընտրությունների մասնակից չեն, սակայն ծավալում են այնպիսի գործունեություն, որն ուղղված է ընտրողների վարքագծի, կամքի վրա ազդելուն՝ ուղղված որևէ քաղաքական ուժի կողմ կամ դեմ, այդպիսով անուղղակիորեն մասնակցելով առնչվող ուժի քարոզարշավի ֆինանսավորմանը: Այդ գործունեությունը կարող է արտահայտվել տարբեր եղանակներով, ինչպես, օրինակ՝ ԶԼՄ-ներում տարբեր նյութերի ու գովազդների պատվերով, գովազդային վահանակներին անուղղակի քարոզչական նյութեր տեղադրելով, չարձանագրված ծառայություններ մատուցելով, բարեգործություն կատարել՝ հուշելով ընտրողներին ում ընտրել կամ չընտրել և այլն:

Հայաստանում նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ:

Բացի այդ, կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են ասոցացվել ընտրություններին մասնակցող կուսակցությունների անվանումների հետ, կամ որոնք ղեկավարվում են կուսակցություն-

26 Նույն տեղում, հոդված 19

ների կողմից, ընտրությունների կամ հանրաքվեի նշանակված լինելու օրվանից մինչև ընտրությունների կամ արդյունքների ամփոփումն ընկած ժամանակահատվածում չեն կարող բարեգործություն իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ: Կազմակերպությունը համարվում է կուսակցության կողմից ղեկավարվող, եթե կազմակերպության ղեկավար մարմնի անդամներն ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների հետ:

Այս կարգավորումներն, անշուշտ, լիարժեք ու բավարար չեն կանխարգելելու քարոզարշավի՝ երրորդ անձանց կողմից կատարվող անուղղակի ֆինանսավորումը: Մյուս կողմից, այսպիսի դերակատարների, առնվազն՝ ֆիզիկական անձանց, գործունեությունը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում դժվար է սահմանափակել կամ վերահսկել, քանի որ դա կարող է վերագրվել խոսքի ազատության խոչընդոտման փորձի, ինչը ընդունելի չէ ժողովրդավարական հասարակությունում:

Գործնականում եղել են դեպքեր, երբ կուսակցություններն օգտագործել են նույնանուն կամ ասոցացվող անվանումներով կամ փոխկապակցված այլ հիմնադրամները (հաճախ նաև՝ բարեգործական), որոնց միջոցով հավաքագրել են նվիրատվություններ և դրանք ուղղել քաղաքական գործունեության ֆինանսավորմանը, կամ քարոզչություն են արել այդպիսի հիմնադրամների և իրենց պատկանող ԶԼՄ-ների միջոցներով, ինչը չի արտացոլվել նախընտրական հիմնադրամներում:

Հաշվետվողականության մեխանիզմներ

Ընտրական գործընթացներում կուսակցությունների հաշվետվողականությունն ապահովելու համար նախատեսված է նախընտրական հիմնադրամների հայտարարագրերի, ինչպես նաև կուսակ-

ցությունների և թեկնածուների գույքի և եկամուտների մասին հայտարարագրերի ներկայացում:

1. Նախընտրական հիմնադրամների հայտարարագրեր[27]

Ընտրություններին մասնակցող կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները իրենց նախընտրական հիմնադրամներին կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ ՎՎԾ են ներկայացնում հայտարարագրեր, ընդ որում՝

- հերթական ընտրությունների դեպքում՝ երեք անգամ՝
  - նախընտրական քարոզչությունը սկսվելուց հետո 10-րդ օրը,
  - նախընտրական քարոզչություն սկսվելուց հետո 20-րդ օրը,
  - ընտրությունների արդյունքների ամփոփումից առաջ 3 օրվա ընթացքում:

- արտահերթ ընտրությունների դեպքում՝ երկու անգամ՝
  - նախընտրական քարոզչությունը սկսվելուց հետո 10-րդ օրը,
  - ընտրությունների արդյունքների ամփոփումից առաջ 3 օրվա ընթացքում
- ԱԺ ընտրությունների երկրորդ փուլի դեպքում
  - արդյունքների ամփոփումից առաջ 3 օրվա ընթացքում

Հայտարարագրերում լրացվում են՝

- նախընտրական հիմնադրամներին կատարված նվիրատվությունների ժամանակագրությունը, նվիրատվության գումարի չափը և նվիրատվություն կատարած անձանց տվյալները,
- յուրաքանչյուր ծառայության, գույքի, ապրանքի ձեռքբերման համար կատարված ծախսերը, դրանց կատարման ժամկետը, ծախսերի կատարումը հաստատող փաստաթղթերի տվյալները,
- մնացորդային գումարը:

Նվիրատվություն կատարող անձանց անձնագրային տվյալները հրապարակման ենթակա չեն:

27 «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, հոդվածներ 28, 29

Հայտարարագրերը ներկայացվում են ՎՎԾ ԿԸՀ որոշմամբ[28] սահմանված կարգով: Հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ 3-օրյա ժամկետում դրանք հրապարակվում են ՎՎԾ կայքէջում:

Հայտարարագրերին կցվում են ծախսերը հիմնավորող փաստաթղթերը՝ պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ, հաշիվ-ապրանքագիր, վճարման անդորրագիր և այլն:

ՎՎԾ-ն կուսակցությունների, դաշինքների նախընտրական հիմնադրամների հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ընտրությունների արդյունքներն ամփոփելուց մեկ օր առաջ, ստուգում է դրանք, ստուգման արդյունքներով կազմում եզրակացություն և ներկայացնում ԿԸՀ, որն էլ հրապարակում է եզրակացությունն իր կայքում: Խախտումների առկայության դեպքում ԿԸՀ-ն պարտավոր է հրավիրել նիստ և հրավիրել ՎՎԾ ներկայացուցչին:

Օրենքը ՎՎԾ-ի կողմից որևէ միջոցառում չի նախատեսում:

Միաժամանակ, ընտրական ցուցակների գրանցումից հետո՝ 3 աշխատանքային օրը մեկ, բանկերը, որտեղ բացվել են նախընտրական հիմնադրամների հաշվեհամարներ, տեղեկանք են ներկայացնում ՎՎԾ-ին՝ կուսակցությունների ու դաշինքների նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ: ՎՎԾ-ն այս տեղեկանքներն ամփոփում և տեղադրում է իր կայքէջում:

2. Կուսակցությունների և թեկնածուների գույքի և եկամուտների մասին հայտարարագրեր[29]

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում կուսակցությունների, դաշինքների ֆինանսների նկատմամբ հավելյալ վերահսկողության մեխանիզմ է կուսակցությունների, դաշինքների,

28 ԿԸՀ 2021 թ. սեպտեմբերի 18-ի «Նախընտրական հիմնադրամ կատարավող մուծումների և հիմնադրամներից կատարվող ծախսերի հաշվառման կարգը, նախընտրական հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրի ձևը սահմանելու մասին» 220-Ն որոշում, https://www.arlis.am/documentview.aspx?docid=156100

29 «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 8

դրանց ընտրական ցուցակներում թեկնածուների գույքի և եկամուտների մասին հայտարարագրերը, որոնք հնարավորություն են տալիս առավել ամբողջական պատկերացում կազմել կուսակցությունների և թեկնածուների կարողությունների մասին, ինչպես նաև՝ նվազեցնել ընտրությունների ժամանակահատվածում կոռուպցիոն ռիսկերը:

Ընտրություններին գրանցման համար ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում, թեկնածուները, կուսակցություններն ու դաշինքները համապատասխան ընտրական հանձնաժողով են ներկայացնում իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագրերը. ԱԺ ընտրությունների դեպքում՝ ԿԸՀ, իսկ ՏԻՄ ընտրությունների դեպքում՝ համապատասխան ԸԸՀ: Հայտարարագրերում նշվում են ընտրություններին գրանցվելու ամսվա սկզբի դրությամբ գույքի կազմը, ինչպես նաև գրանցման ժամկետի ամսվան նախորդող 1 տարվա ընթացքում ստացված եկամուտները:

Կուսակցությունները, դաշինքների մաս կազմող կուսակցությունները ներկայացնում են հայտարարագիր ԿԸՀ որոշմամբ սահմանված կարգով,[30] որտեղ լրացվում են տեղեկություններ հետևյալի մասին.

կուսակցության՝

- անշարժ գույքի,
- շարժական գույքի,
- թանկարժեք գույքի,
- դրամական միջոցների,
- բաժնեմասերի և փայաբաժինների,
- եկամուտների մասին:

Կուսակցությունների, դաշինքների ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուները ներկայացնում են հայտարարագիր ԿԸՀ

30 ԿԸՀ 2021 թ. օգոստոսի 26-ի «Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների գույքի և եկամուտների մասին հայտարարագրի ձևը և ներկայացման կարգը սահմանելու մասին» 209-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180729

որոշմամբ սահմանված կարգով,[31] լրացվում են տեղեկություններ հետևյալի մասին.

թեկնածուի՝

- անշարժ գույքի,
- շարժական գույքի,
- թանկարժեք գույքի,
- եկամուտների,
- դրամական միջոցների,
- արժեթղթերի և այլ ներդրումների մասին:

31 ԿԸՀ 2016 թ. հունիսի 17-ի «Թեկնածուի գույքի և եկամուտների մասին հայտարարագրի ձևը և ներկայացման կարգը սահմանելու մասին» 23-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180729

ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Կուսակցությունների ֆինանսավորման նկատմամբ հանրային վերահսկողությունն արդյունավետ իրականացնելու համար հարկավոր է հստակեցնել թիրախները և վերահսկողության մեթոդաբանությունը:

Ի՞նչը ստուգել

Ֆինանսների թափանցիկությունը

- Առկա՞ են օրենքով պահանջվող հաշվետվությունները, հայտարարագրերը, իսկ պետական ֆինանսավորման դեպքում՝ նաև աուդիտորական եզրակացությունները: Արդյո՞ք դրանք տեղադրվել են սահմանված ժամկետներում:
- Որքանո՞վ են հայտարարագրերը, հաշվետվությունները, եզրակացությունները բովանդակային, լիարժեք ու ճշգրիտ լրացված, որքանո՞վ են համապատասխանում օրենքի պահանջներին:
- Արդյո՞ք միևնույն կուսակցության տարբեր փաստաթղթերում առկա են իրար հակասող տվյալներ (օրինակ՝ գործունեությունը հավաստող հայտնի փաստերի պարագայում ներկայացված է զրոյական հաշվետվություն, կամ իրականացվել է դրամահավաք, սակայն արտացոլված չէ, կամ իրականացված հետազոտության համար աշխատանքի/ծառայության վարձատրության մասին տվյալներ առկա չեն):

Ֆինանսների մաքրությունը

- Համապատասխանո՞ւմ են կուսակցության ընդհանուր մուտքերի և ելքերի, ֆիզիկական անձանց նվիրատվությունների, մուտքի վճարների, անդամավճարների և այլ փոխանցումները օրենքով նախատեսված սահմանաչափերին:
- Արդյո՞ք ֆիզիկական անձանցից կատարվող հատկացումները տրամաբանորեն համապատասխանում են նրանց ստացած եկամուտներին:
- Առկա՞ են օրենքով չթույլատրված աղբյուրներից հատկացումներ, կասկածելի նվիրատուներ:

- Առկա՞ են կասկածելի նպատակներով ծախսեր:
- Առկա՞ են կապեր փոխանցումներ կատարող անձանց և պետական պատվերներ ստացող ընկերությունների միջև:
- Ովքե՞ր են առնչվող ընկերությունների իրական սեփականատերերը, ի՞նչ պատմություն ու հետագիծ ունեն դրանք/նրանք:

Պետական ֆինանսավորման հիմքերը

- Որքանո՞վ են հավաստի պետական ֆինանսավորման ենթակա կազմակերպությունների նպատակային ֆինանսավորման համար ներկայացված հիմքերը՝ ղեկավար կազմում սեռերի ներկայացվածությունը, մարզերում գործունեության ծավալումը և հրապարակված հետազոտական նյութերը:
- Որքանո՞վ է պետական նպատակային ֆինանսավորումը ծառայում օրենքով սահմանված նպատակներին:

Պետության ռեսուրսների օգտագործումը

- Որքանո՞վ են վարչական/հանրային ռեսուրսները, այդ թվում՝ մարդկային, ֆինանսական, լրատվական, իրավաստեղծ (օրենսդրական/ենթաօրենսդրական), իրավակիրառ/վերահսկողական (տեսչական, հարկային) և իրավապահ/դատական ռեսուրսները ծառայեցվում առանձին կուսակցությունների օգտին կամ դեմ, մասնավորապես՝ ընտրական գործընթացներում:

Պատասխանատվությունը

- Որքանո՞վ է պատշաճ իրականացվում վերահսկողությունը (ԿԿՀ, ԿԸՀ):
- Ինչպիսի՞ն են վերահսկող մարմինների արձագանքը խախտումների պարագայում: Ինչպիսի՞ն են դրանց ստուգման/ուսումնասիրության արդյունքները:
- Ինչպիսի՞ պատասխանատվության միջոցներ են կիրառվում:

Ինչպե՞ս ստուգել

- Ուսումնասիրել, այդ թվում՝ համադրել, կուսակցությունների և նրանց ղեկավար կազմի կողմից ներկայացված հաշվետվությունները ու հայտարարագրերը, պետական ֆինանսավորման դեպքում՝ աուդիտորական հաշվետվությունները, ընտրություններին մասնակցող կուսակցությունների, դաշինքների, թեկնածուների հայտարարագրերը.
- Կուսակցությունների և դրանց ղեկավար մարմնի անդամների ներկայացրած տվյալները համադրել հաշվետու տարում ընտրություններին մասնակցած կուսակցությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում ներկայացվող հաշվետվությունների, կուսակցության/դաշինքների անդամ կուսակցությունների ղեկավար մարմինների անդամների, թեկնածուների գույքի և եկամուտի հայտարարագրերի հետ.
- Բաց աղբյուրներում փնտրել կուսակցությունների ու դրանց ղեկավար մարմնի անդամների, ընտրությունների ընթացքում կուսակցությունների, դաշինքների, թեկնածուների հաշվետվություններում ու հայտարարագրերում ներկայացված տվյալները հավաստող կամ հարցականի տակ դնող տեղեկություններ.
- Կուսակցություններին հասցեագրել հարցումներ. մասնավորապես՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան ներկայացված հարցումներին պետական ֆինանսավորում ունեցող կուսակցությունները պարտավոր են պատասխանել նույն օրենքով սահմանված կարգով.
- Իրականացնել «դաշտային» ուսումնասիրություններ՝ դիտարկելով գրասենյակների, աշխատողների, տրանսպորտային միջոցների առկայությունը և այլն:

Որտե՞ղ փնտրել

Կայք	Տեղեկություններ	Ինչպե՞ս փնտրել
www.azdarar.am	Կուսակցությունների տարեկան հաշվետվություններ Աուդիտորական եզրակացություններ	«Որոնում» բաժնում հավաքել որևէ կուսակցության անվանում և «տարեկան հաշվետվություն» բանալի բառերը: Ըստ անհրաժեշտության՝ ընտրել «Ընդգրկել նաև արխիվը» տողը: Բացվող էջում «Հայտատու»-ի դիմաց «Կուսակցություններ» կոճակը սեղմելով գտնել տարբեր կուսակցությունների ներկայացրած հաշվետվությունների բազան: կամ «Հայտարարություններ» բաժնում «Իրավաբանական անձինք» ցանկում ընտրել «Կուսակցություններ» կոճակը և կրկին գտնել կուսակցությունների ներկայացրած հաշվետվությունների բազան:
www.cpcarmenia.am	Կուսակցությունների ղեկավար մարմինների անդամների գույքի և եկամուտների հայտարարագրեր Աուդիտորական կազմակերպությունների ընտրության մասին տեղեկատվություն	Կայքի գլխավոր էջի վերին հատվածում «Հայտարարագրերի ռեեստր» բաժնում գտնել կուսակցությունների ղեկավար մարմինների անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերը: Կայքի գլխավոր էջի «Հայտարարություններ» բաժնում գտնել աուդիտորական կազմակերպությունների ընտրության մասին տեղեկատվությունը:

Առանցքային խնդիր է առնչվող ինտերնետային կայքերի աշխատանքի ցածր որակը, անհարմար կառուցվածքը և տվյալների որոնման դժվարությունները, ներկայացված տվյալների բաց և մեքենայաընթեռնելի չլինելը:

www.elections.am	Ընտրություններին մասնակցող կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրեր Թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրեր Նախընտրական հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրեր Նախընտրական հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքների մասին եզրակացություններ Նախընտրական հիմնադրամների ելքերի և մուտքերի վերաբերյալ առևտրային բանկերի կողմից տրամադրվող տեղեկանքներ	Կայքի գլխավոր էջում վերին հատվածի «Ընտրություններ» բաժնում գտնել համապատասխան ընտրությունները, տվյալ էջում ձախ սյան մեջ ընտրել «Գրանցված թեկնածուներ» դաշտը, որտեղ առկա են տվյալ ընտրություններին մասնակցող (այդ թվում՝ դաշինքներում ներկայացված) կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրերը, իսկ նույն էջի «Ընտրական ցուցակ»-ում զետեղված են թեկնածուների հայտարարագրերը: Կայքի գլխավոր էջի վերին հատվածում «ԿԸՀ» բաժնում ընտրել «Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության» էջը, իսկ տվյալ էջում՝ համապատասխան տարվա համապատասխան ընտրությունները, որտեղ կարելի է գտնել նախընտրական հիմնադրամի հայտարարագրերը, դրանց ստուգման արդյունքների վերաբերյալ եզրակացությունները և բանկերի կողմից տրամադրված տեղեկանքները:
www.google.com կամ այլ որոնողական համակարգեր	Պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունների ցանկը և ֆինանսավորման չափը՝ ըստ կիսամյակների	Որոնել՝ օգտագործելով «կուսակցություններ», «պետական աջակցություն», «պետական ֆինանսավորում» և հարատիպ այլ բանալի բառեր:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Կուսակցությունների ֆինանսավորման (ԿՖ) խախտումների և վարչական ռեսուրսի (ՎՌ) չարաշահման առնչությամբ պատասխանատվությունը

Վարչական պատասխանատվություն

ՀՀ ՎԻՎՕ[32] հոդված	Վարչական իրավախախտման նկարագիր	Պատժամիջոց	Պատաս-խանատ-վության ենթարկող մարմին
40.3 (ԿՖ)	Թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կողմից նախընտրական հիմնադրամ չբացելը, եթե դա բացելը օրենքով սահմանված պարտականություն է, նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրն օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելը, հայտարարագիրն օրենքով սահմանված կարգի խախտմամբ ներկայացնելը կամ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելը	Տուգանք՝ 300,000-500,000 ՀՀ դրամի չափով	ՎԴ
40.8 (ՎՌ)	1. Քարոզչության համար օրենքով սահմանված ժամանակահատվածում նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելու իրավունք չունեցող անձի կողմից նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելը՝ 2. Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության նպատակով վարչական ռեսուրսի օգտագործումը, այդ թվում՝ ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային ու կապի միջոցների և մարդ-կային ռեսուրսների օգտագործումը, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների համար, ինչպես նաև պաշտոնեական դիրքի օգտագործումն ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար՝	1. Տուգանք քաղաքացիների նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի 100,000-200,000 ՀՀ դրամի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 200,000-400,000 ՀՀ դրամի չափով 2. Տուգանք քաղաքացիների նկատմամբ՝ 200,000-400,000 ՀՀ դրամի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 400,000-800,000 ՀՀ դրամի չափով	ՎԴ

32 Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք

40.16 (ՎՈ)	Ընտրությունների կամ հանրաքվեի նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների ամփոփումն ընկած ժամանակահատվածում այն կազմակերպությունների կողմից, որոնց անվանումները կարող են ասոցացվել ընտրություններին մասնակցող կուսակցությունների անվանումների հետ, կամ կուսակցությունների կողմից ղեկավարվող կազմակերպությունների կողմից, ինչպես նաև այն կազմակերպությունների կողմից, որոնց հիմնադիրը (հիմնադիրները) կամ ղեկավարը տվյալ ընտրություններում առաջադրվել է(են) որպես թեկնածու, բարեգործություն կատարելն այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ	Տուգանք կազմակերպության պաշտոնատար անձի նկատմամբ՝ 200,000-400,000 ՀՀ դրամի չափով	ՎԴ
169.28 (ԿՖ)	1. «Կուսակցությունների մասին» օրենքներով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, ԿԿՀ գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը 2. Հայտարարատուի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելը 3. Հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը	1. Տուգանք՝ հայտարարատու անձի նկատմամբ 200,000 ՀՀ դրամի չափով 2. Նախազգուշացում, իսկ դրանից հետո 30 օրվա ընթացքում հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջներին կամ ներկայացման կարգին համապատասխան չներկայացնելը՝ տուգանք 200,000 ՀՀ դրամի չափով 3. Տուգանք 200,000-400,000 ՀՀ դրամի չափով	ԿԿՀ
189.13 (ԿՖ)	1. Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին պետական լիազոր մարմին հաշվետվություն չներկայացնելը կամ դա չհրապարակելը 2. Վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում կրկին վերոնշյալ 1-ին կետում նշված խախտումը կատարելու դեպքում	1.Տուգանք՝ կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝40,000-50,000 ՀՀ դրամի չափով 2. Տուգանք կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 450,000-500,000 ՀՀ դրամի չափով	ԿԿՀ
189.14 (ԿՖ)	1. Կուսակցության հրապարակած և լիազոր մարմին ներկայացրած հաշվետվության հավաստիությունը ստուգելու համար լիազոր մարմնի պահանջի դեպքում օրենքով սահմանված փաստաթղթերը սահմանված ժամկետում չտրամադրելը 2. Վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում կրկին վերոնշյալ 1-ին կետում նշված խախտումը կատարելու դեպքում	1.Տուգանք՝ կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 80,000-100,000 ՀՀ դրամի չափով 2. Տուգանք կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝150,000-200,000 ՀՀ դրամի չափով	ԿԿՀ

189.15 (ԿՖ)	1. Կուսակցությանն օրենքով սահմանված նվիրատվություններն անկանխիկ չկատարելը 2. Վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում 3. Կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելը 4. Կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում	1. Տուգանք՝ նվիրատու ֆիզիկական անձի նկատմամբ՝ 30,000-50,000 ՀՀ դրամի չափով, իսկ կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 100.000-200.000 ՀՀ դրամի չափով 2. Տուգանք՝ նվիրատու ֆիզիկական անձի նկատմամբ՝ 100,000-200,000 ՀՀ դրամի չափով, կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ 300,000-400,000 3.Տուգանք՝ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ 100,000-200,000 ՀՀ դրամի չափով 4.Տուգանք՝ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ 300,000-400,000 ՀՀ դրամի չափով	ԿԿՀ
189.16 (ԿՖ)	1. Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելը 2. Վերոնշյալ 1-ին կետում նշված իրավախախտումը կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում	1.Տուգանք՝ կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 100,000-150,000 ՀՀ դրամի չափով 2.Տուգանք՝ կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 200,000-250,000 ՀՀ դրամի չափով	ԿԿՀ
189.19 (ԿՖ)	Կուսակցության անդամի կողմից կուսակցության օգտին օրենքով չթույլատրված աղբյուրներից կամ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող նվիրատվություն ներգրավելը	Տուգանք՝ կուսակցության անդամի նկատմամբ՝ 200,000-500,000 ՀՀ դրամի չափով	ԿԿՀ
189.20 (ԿՖ)	1. Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելը 2. Վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում վերոնշյալ՝ 1-ին կետում նշված իրավախախտումը կրկին կատարելու դեպքում	1.Տուգանք՝ նվիրատուի նկատմամբ առավելագույն չափը գերազանցող գումարի չափով: 2.Տուգանք՝ նվիրատուի նկատմամբ առավելագույն չափը գերազանցող գումարի կրկնապատիկի չափով:	ԿԿՀ

189.21 (ԿՖ)	1. Իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելը 2. Վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում վերոնշյալ՝ 1-ին կետում նշված իրավախախտումը կրկին կատարելու դեպքում	1. Տուգանք՝ նվիրատվության գումարի չափով: 2. Տուգանք՝ նվիրատվության գումարի կրկնապատիկի չափով:	ԿԿՀ
189.22 (ԿՖ)	1. Անձի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը չգերազանցելու արգելքը այլ անձի անունից նվիրատվություն ձևակերպելու եղանակով շրջանցելը 2. Վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում վերոնշյալ՝ 1-ին կետում նշված իրավախախտումը կրկին կատարելու դեպքում՝ 3. Անձի կողմից օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը այլ անձի անունից նվիրատվություն ձևակերպելու եղանակով շրջանցելը 4. Վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում վերոնշյալ՝ 3-րդ կետում նշված իրավախախտումը կրկին կատարելու դեպքում	1. Տուգանք՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի չափով: 2. Տուգանք՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի կրկնապատիկի չափով: 3. Տուգանք՝ նվիրատվության գումարի չափով: 4. Տուգանք՝ նվիրատվության գումարի կրկնապատիկի չափով:	ԿԿՀ
189.23 (ԿՖ)	Բանկի կամ վարկային կազմակերպության կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելը	Տուգանք՝ 400,000-800,000 ՀՀ դրամի չափով	ԿԿՀ
189.24 (ԿՖ)	Կուսակցության կողմից իր ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնա-տար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին եռօրյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին չծանուցելը	Տուգանք՝ կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 40,000-80,000 ՀՀ դրամի չափով:	ԿԿՀ

Քրեական պատասխանատվություն

ՀՀ ՔրՕր հոդված	Հանցանքի նկարագրություն	Պատժամիջոց	Քրեական վարույթ նախաձեռ-նող մարմին	Քննող դատարան
210, մաս 2, 3	2. Անձի ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի ազատ իրականացումը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքը խոչընդոտելը, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի, այցելուի, լիազոր ներկայացուցչի, հանրաքվեի նախաձեռնող խմբի ներկայացուցչի, վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի, տեխնիկական սարքավորումն սպասարկող անձի իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը, որը կատարվել է՝ 1. շանտաժով, 2. անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու կամ գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով, 3. նյութապես շահագրգռելովնյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով՝ 4. ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի նախագահի կամ անդամի կողմից, 5. իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ	2. Ազատազրկում՝ 3-6 տարի ժամկետով 3. Ազատազրկում՝ 4-8 տարի ժամկետով:	Քննչական կոմիտե	ԸԻԴ

	6. մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ 3. Հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելուն կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուն կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելուն կամ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելուն հարկադրելը, որը կատարվել է՝ 1. անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու կամ գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով, 2. իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ			
211, մաս 2	2. Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը կամ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտելը, որը կատարվել է՝ 1. շանտաժով, 2. անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու կամ գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով, 3. իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, 4. նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով կամ 5. մի խումբ անձանց կողմից	Ազատազրկում՝ 3-6 տարի ժամկետով	Քննչական կոմիտե	ԸԻԴ

221 (ԿՖ)	Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը	Ազատազրկում՝ 3-6 տարի ժամկետով	Հակակոռուպցիոն կոմիտե	ՀԿԴ
221.1 (ԿՖ)	1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից կամ հանրաքվեի քարոզչ ության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից խոշոր չափով (10 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումար) չկատարելը կամ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախընտրական հիմնադրամ կամ հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրում քարոզչության նպատակով ձեռք բերված ապրանքը կամ մատուցված ծառայությունը շուկայական արժեքով չներառելը (եթե դա ձեռք է բերվել կամ մատուցվել է անհատույց կամ շուկայական արժեքից ցածր գնով կամ մինչև նախընտրական հիմնադրամի կամ հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամի ձևավորումը), որը կազմել է խոշոր չափ (10 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումար): 2. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախընտրական հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կամ հանրաքվեի քարոզչության հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը քվեարկությունից հետո օրենքով՝ ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ ընկած ժամանակահատվածում չներկայացնելը	1. Տուգանքով՝ անձի եկամտի[33] առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակում՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկում՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով, կամ ազատազրկում՝ առավելագույնը 1 տարի ժամկետով: 2. Ազատազրկում՝ 1-3 տարի ժամկետով	Հակակոռուպցիոն կոմիտե	ՀԿԴ

33 Որպես եկամուտ դիտարկվում է անձի ամսական եկամուտը (հանցանքն ավարտվելու օրվան նախորդող 12 ամիսների ընթացքում անձի ստացած միջին ամսական եկամտի 35 տոկոսը): Այն դեպքում, երբ անձը չունի եկամուտ, հաշվարկման հիմքում ընդունվում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափը (75.000 ՀՀ դրամ):

231 (ԿՖ)	1. Կուսակցության անդամի կողմից կուսակցության օգտին օրենքով չթույլատրված աղբյուրից խոշոր չափերով (1 միլիոն ՀՀ դրամը գերազանցող) կամ օրենքով սահմանված առավելագույն չափը խոշոր չափերով գերազանցող նվիրատվություն ներգրավելը 2. Կուսակցության անդամի կողմից կուսակցության օգտին օրենքով չթույլատրված աղբյուրից խոշոր չափերով (1 միլիոն ՀՀ դրամը գերազանցող) կամ օրենքով սահմանված առավելագույն չափը խոշոր չափերով գերազանցող նվիրատվություն ներգրավելը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով	1. Տուգանք՝ անձի եկամտի[34] առավելագույնը քսանապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 1 տարի ժամկետով: 2. Ազատազրկում՝ 1-3 տարի ժամկետով	Հակակոռուպցիոն կոմիտե	ՀԿԴ
232 (ԿՖ)	1. Կուսակցության անդամի կողմից կուսակցության օգտին օրենքով չթույլատրված աղբյուրից խոշոր չափերով (1 միլիոն ՀՀ դրամը գերազանցող) կամ օրենքով սահմանված առավելագույն չափը խոշոր չափերով գերազանցող նվիրատվություն ներգրավելը 2.Կուսակցության անդամի կողմից կուսակցության օգտին օրենքով չթույլատրված աղբյուրից խոշոր չափերով (1 միլիոն ՀՀ դրամը գերազանցող) կամ օրենքով սահմանված առավելագույն չափը խոշոր չափերով գերազանցող նվիրատվություն ներգրավելը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով	1.Տուգանք՝ առավելագույնը անձի եկամտի[35] քսանապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 1 տարի ժամկետով 2. Ազատազրկում՝ 1-3 տարի ժամկետով	Հակակոռուպցիոն կոմիտե	ՀԿԴ

34 Նույնը:

35 Նույնը:

233 (ԿՖ)	1.Կուսակցության օգտին նվիրատվություն կատարելուն հարկադրելը 2. Կուսակցության օգտին նվիրատվություն կատարելուն հարկադրելը, որը կատարվել է հիշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝	1. Տուգանք՝ անձի եկամտի[36] առավելագույնը տասնապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը 1 տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով 2. Տուգանք՝ անձի եկամտի առավելագույնը քսանապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ 2-5 տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ 1-2 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով	Քննչական կոմիտե	ԸԻԴ
234 (ԿՖ)	1. Իրավաբանական անձի անունից կուսակցությանը խոշոր չափով նվիրատվություն կատարելը	1. Տուգանք՝ անձի եկամտի[37] առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով	Քննչական կոմիտե	ԸԻԴ

36 Նույնը:

37 Նույնը:

235 (ԿՖ)	1. Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը խոշոր չափերով (1 միլիոն ՀՀ դրամը) գերազանցելը՝	1. Տուգանք՝ անձի եկամտի[38] առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով	Քննչական կոմիտե	ԸԻԴ
236 մաս 3 (ՎՌՋ)	3. Օրինական հավաք անցկացնելուն կամ դրան մասնակցելուն խոչընդոտելը կամ օրինական կամ անօրինական հավաքին մասնակցելուն հարկադրելն անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ շանտաժի միջոցով, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով	3. Ազատազրկում՝ 2-5 տարի ժամկետով	Քննչական կոմիտե	ԸԻԴ

38 Նույնը:

441 (ՎՌՀ)	1. Պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ այնպիսի արարք կատարելը, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, որն էական (5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարի (արժեքը) չափով) վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին 2. Վերոգրյալ 1-ին կետով նկարագրված արարքը, որը՝ 1. կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գոր-ծադրելու սպառնալիքով, 2. պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, 3. կատարվել է զենք կամ հատուկ միջոց օգտագործելով, 4. կատարվել է մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ 5. անզգուշությամբ առաջացրել է այլ ծանր հետևանք 3. Վերոգրյալ 1-ին կամ 2-րդ կետով նկարագրված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից	1. Տուգանք՝ անձի եկամտի քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ 3-7 տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ 1-3 տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ 1-2 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ 1-4 տարի ժամկետով 2. Ազատազրկում՝ 4-8 տարի ժամկետով 3. Ազատազրկում՝ 5-10 տարի ժամկետով	Հակակո-ռուպցիոն կոմիտե	ՀԿԴ

Հարկադրանքի այլ միջոցներ

Օրենք, հոդված	Հակաօրինական վարքագիծ	Հարկարդանքի միջոց	Նախաձեռնող մարմին	Որոշում կայացնող մարմին
Կուսակցությունների մասին օրենք, հոդված 32	• կուսակցության կողմից օրենքով չթույլատրված կամ օրենքով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետում պետական բյուջե կամ նվիրատուին փոխանցելու օրենքով սահմանված կարգը դիտավորությամբ խախտելը • կամ կուսակցության տարեկան հաշվետվությունն օրենքով սահմանված ժամկետում և կարգով հրապարակելու կամ պետական լիազոր մարմին ներկայացնելու օրենքով սահմանված կարգը դիտավորությամբ խախտելը • կամ օրենքով սահմանված՝ տարեկան հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տրամադրելու օրենքով սահմանված կարգը դիտավորությամբ խախտելը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով պատասխանատվության ենթարկվելուց և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կուսակցության գործունեությունը կասեցնելու հնարավորության վերաբերյալ գրավոր նախազգուշացվելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում, խախտումը չվերացնելը	Հանգեցնում է կուսակցության գործունեության կասեցման	ԿԿՀ-ն իրավախախտման հիմքերի առկայության մասին անհապաղ տեղեկացնում է Ազգային Ժողովին կամ Կառավարությանը: Կուսակցության գործունեության կասեցման նպատակով Սահմանադրական դատարան կարող է դիմել Կառավարությունը կամ Ազգային Ժողովը:	Սահմանադրական դատարան
Ընտրական օրենսգիրք, հոդված 26	Նախընտրական հիմնադրամ չբացելու համար վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում նախընտրական հիմնադրամ չբացելու դեպքում	Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչում	Իրավասու ընտրական հանձնաժողովը	ՎԴ

Հավելված 2. Կուսակցությունների տարեկան հաշվետվության բովանդակությունը

1. «Ընդհանուր» թերթ, որտեղ լրացվում են

- ***Ընդհանուր տեղեկությունները*** կուսակցության մասին, այդ թվում՝ անվանումը, գրանցման ամսաթիվը, ամփոփ տվյալներ, ներառյալ՝ անդամների թիվը, գաղափարախոսությունը, արժեքները և այլն, աշխատակիցների միջին թվաքանակը հաշվետու տարվա ընթացքում, հասցեն և ինտերնետային կայքը.
- ***Ղեկավար անձնակազմի վերաբերյալ տեղեկությունը***, այդ թվում՝ ղեկավար մարմնում պաշտոն զբաղեցնող անձանց անուն-ազգանունը, անձնագրային տվյալները, սեռը, պաշտոնի ստանձնման ամսաթիվը և պաշտոնի դադարեցման ամսաթիվը.
- ***Տարածքային ստորաբաժանումների վերաբերյալ տեղեկությունը***, այդ թվում՝ տարածքային ստորաբաժանման գտնվելու վայրի հասցեն, գործունեության մարզը, ստորաբաժանման գործունեության սկզբի և վերջի ամսաթվերը.
- ***Հետազոտությունների մասին տեղեկությունը***, այդ թվում՝ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության կողմից հրապարակված կուսակցության գաղափարախոսության, ծրագրային նպատակների և հանրային քաղաքականության հարցերի մասին հետազոտությունների վերաբերյալ տվյալներ, ներառյալ՝ հրապարակման վերնագիրը, հետազոտության տեսակը, հրապարակման ամսաթիվը և ինտերնետային հղումը.

2. «Մուտքեր ելքեր» թերթը, որտեղ լրացվում են հաշվետու տարվա ընթացքում կուսակցության մուտքերի և ելքերի վերաբերյալ տեղեկությունները, այդ թվում՝

Մուտքեր

- ***Պետական ֆինանսավորումը,*** ներառյալ՝ ստացված ընդհանուր և նպատակային ֆինանսավորման չափերը.
- ***Նվիրատվությունները,*** ներառյալ՝ ֆիզիկական անձանցից ստացված դրամական նվիրատվությունների և օրենքով սահ-

մանված չափը գերազանցող կամ չթույլատրված աղբյուրներից ստացված դրամական նվիրատվությունների գումարների ընդհանուր չափը:

- ***Բնեղենով նվիրատվությունները***, ներառյալ՝ կուսակցության օգտին անհատույց կատարված աշխատանքների կամ ծառայությունների, տեղական և միջազգային համագործակցության շրջանակներում կուսակցությանն ու նրա անդամներին ուսումնառության, վերապատրաստման, համաժողովներին, սեմինարներին ու նմանատիպ այլ միջոցառումներին մասնակցության նպատակով հատուցված համապատասխան միջոցների, անշարժ գույքը կուսակցության անհատույց օգտագործմանը հանձնելու արդյունքում հաշվարկված մուտքերի, ինչպես նաև ֆիզիկական անձանց ոչ դրամական նվիրատվությունների գումարների ընդհանուր չափը.
- ***Մուտքի վճարները՝*** կուսակցությանն անդամագրվելու համար միանվագ կատարվող վճարների (մուտքի վճար) ընդհանուր չափը.
- ***Անդամավճարները՝*** սահմանված չափով պարբերաբար կատարվող վճարների (անդամավճար) ընդհանուր չափը.
- ***Կուսակցության անշարժ գույքի վաճառքից մուտքերը՝*** դրամական միջոցների ընդհանուր գումարի չափը.
- ***Կուսակցության անշարժ գույքի վարձակալության հանձնումից մուտքերը՝*** անշարժ գույքի վարձակալության հանձնումից առաջացած դրամական միջոցների ընդհանուր գումարի չափը.
- ***Ստացված վարկերը և փոխառությունները՝*** հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած վարկերի և փոխառությունների ընդհանուր գումարի չափը.
- ***Բանկային ավանդների գծով ստացված տոկոսները՝*** հաշվետու տարվա ընթացքում կուսակցության բանկային ավանդների գծով փաստացի ստացված տոկոսների ընդհանուր գումարի չափը (ավանդի ներդրումը կամ դրա վերադարձը չի ներառվում, հաշվետվության համապատասխանաբար ելքերի կամ մուտքերի բաժնում).
- ***Կուսակցության հիմնադրած ընկերությունների կողմից՝ կուսակցությանը փոխանցած միջոցների*** (շահաբաժինների) ընդհանուր գումարի չափը.

- ***Այլ մուտքերը,*** ներառյալ՝ նախորդ կետերում չնշված, սակայն մուտք եղած այլ դրամական կամ ոչ դրամական միջոցների գումարի ընդհանուր չափը.

Ելքեր

- ***Աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարները,*** քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա ծառայությունների մատուցման վճարների դրամական և ոչ դրամական միջոցների ընդհանուր գումարի չափը.
- ***Հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարների ընդհանուր գումարի չափը.***
- ***Կոմունալ վճարները,*** ներառյալ՝ էլեկտրաէներգիայի, ջրամատակարարման, գազամատակարարման, կենտրոնական ջեռուցման, տաք ջրամատակարարման, կոյուղու, սանմաքրման, ինտերնետի, հեռախոսակապի և այլ ծառայությունների մատուցման համար վճարված ընդհանուր գումարի չափը.
- ***Գույքի վարձակալության վճարները***, ներառյալ՝ կուսակցության կողմից վարձակալված գույքի դիմաց հաշվետու տարվա ընթացքում կատարած վարձակալական վճարների հանրագումարը.
- ***Անշարժ գույքի ձեռքբերման*** համար կատարված վճարների հանրագումարը.
- ***Տրանսպորտային միջոցների ձեռքբերման համար*** կատարված վճարների հանրագումարը.
- ***Ապրանքանյութական արժեքներ ձեռք բերելու համար*** կատարված վճարների, այդ թվում՝ տրված կանխավճարների հանրագումարը,
- ***Տրանսպորտային ծախսերի գծով վճարները***, ներառյալ՝ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության կողմից տրանսպորտային ծախսերի դիմաց կատարված վճարների հանրագումարը՝ բացառությամբ այլ կետերում ներառված ծախսերի (աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված այլ վճարներ, քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա ծառայությունների մատուցման վճարներ, ապրանքանյութական արժեքներ ձեռք բերելու համար կատարված վճարներ և այլն),

- ***Գործուղման ծախսերի գծով վճարները***, ներառյալ՝ հաշվետու տարվա ընթացքում կուսակցության աշխատակից հանդիսացող անձի գործուղման համար ՀՀ օրենսդրության սահմանաչափերը[39] չգերազանցող գործուղման ծախսերի դիմաց կատարված վճարների հանրագումարը,
- ***Այլ ելքերը***, ներառյալ՝ նախորդ տողերում չնշված այլ դրամական կամ ոչ դրամական ելքերի ընդհանուր չափը.

3. «Գույք» թերթը, որտեղ լրացվում են կուսակցությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

- ***Անշարժ գույքի հասցեն՝*** ըստ սեփականության իրավունքի վկայականում նշված տվյալների կամ դրա բացակայության դեպքում՝ գույքի փաստացի գտնվելու վայրի հասցեն, կադաստրային ծածկագիրը կամ վկայականի համարը, անշարժ գույքի տեսակը, ընդ որում՝ եթե հողամասը և դրա վրա ամրակայված մեկ կամ մի քանի անշարժ գույքերը հաշվառված են մեկ համարի ներքո (մեկ սեփականության վկայական), դրանց տեսակները և համառոտ նկարագիրը նշվում են առանձին.[40]
- ***Տարվա ընթացքում անշարժ գույքի ձեռքբերման և օտարման գործարքները***, այդ թվում՝ անշարժ գույքի գտնվելու վայրը, անշարժ գույքի կադաստրային ծածկագիրը կամ սեփականության վկայականի համարը, անշարժ գույքի համապատաս-

39 ՀՀ կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի չափերի հաշվարկման և հատուցման վճարման կարգը, հատուցման համակր կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերը, օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողի և նրա ընտանիքի անդամների, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունում բնակարանի համար դրամական փոխհատուցման կարգերն ու չափերը հաստատելու մասին» 2335-Ն որոշում, https://www.arlis.am/documentview.aspx?docid=175685

40 Անշարժ գույքի հասցեն, կադաստրային ծածկագիրը, սեփականության վկայականի համարը ենթակա չեն հրապարակման:

խան տեսակը, ընդ որում՝ եթե հողամասը և դրա վրա ամրակայված մեկ կամ մի քանի անշարժ գույքերը հաշվառված են մեկ համարի ներքո (մեկ սեփականության վկայական), դրանց տեսակները նշվում են առանձին, գույքի կադաստրային կամ շուկայական արժեքը՝ ՀՀ դրամով, գործարքի գումարը՝ ՀՀ դրամով (նվիրատվության դեպքում այս դաշտում նշվում է՝ 0).[41]

- ***Անշարժ գույքի ձեռքբերման արդյունքում հաշվարկված ոչ դրամային մուտքերը*** (բնեղենով նվիրատվությունը), իսկ օտարման արդյունքում՝ հաշվարկված մուտքերը (կուսակցության օգտին կատարվող նվիրատվություններ), անշարժ գույքի գործարքի համապատասխան տեսակը, գործարքի պետական գրանցման ամսաթիվը, գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում անուն-ազգանունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գործարքի կողմի հաշվառման կամ գրանցման վայրի հասցեն, դրա անհնարինության դեպքում՝ փաստացի բնակության կամ գտնվելու վայրի հասցեն.
- ***Տարեվերջի դրությամբ առկա տրանսպորտային միջոցները***, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի մակնիշը, սերիան, նույնականացման համարը, թողարկման տարեթիվը՝ ըստ հաշվառման վկայագրի, սերիան՝ ըստ հաշվառման վկայագրի.[42]
- ***Տարվա ընթացքում տրանսպորտային միջոցների ձեռքբերման և օտարման գործարքները***, ներառյալ՝ տրանսպորտային միջոցի շուկայական արժեքը (նվիրատվության դեպքում նշվում է 0), գործարքի գումարը՝ ՀՀ դրամով, տրանսպորտային միջոցի ձեռքբերման արդյունքում կուսակցության մոտ ձևավորված խնայողության (բնեղենով նվիրատվությունը) կամ տրանսպորտային միջոցի օտարման արդյունքում հաշվարկված մուտքերը (կուսակցության օգտին կատարվող նվիրատվություններ), գործարքի պետական գրանցման ամսաթիվը, գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝

41 Նույնը, ինչպես նաև գործարքի կողմի անուն-ազգանուն կամ անվանումը, հաշվառման կամ գրանցման վայրի հասցեն ենթակա չեն հրապարակման:

42 Տրանսպորտային միջոցների նույնականացման համարը ենթակա չէ հրապարակման:

անուն-ազգանունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գործարքի կողմի հաշվառման կամ գրանցման վայրի հասցեն, դրա անհնարինության դեպքում՝ փաստացի բնակության կամ գտնվելու վայրի հասցեն.[43]

4. «Պարտավորություններ» թերթը, որտեղ լրացվում են հետևյալ տեղեկությունները՝

- ***Բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների մասին տվյալներ,*** ներառյալ՝ ֆինանսական կազմակերպության լրիվ անվանումը, գրանցման հասցեն՝ ՀՀ տարածքից դուրս գտնվելու դեպքում, վարկի տեսակը, արժույթը, մայր գումարի մնացորդը արժույթով, տարեկան անվանական տոկոսադրույքը, պարտավորության պայմանագրի կնքման և պարտավորության վերջնաժամկետի ամսաթվերը.[44]
- ***Ստացված փոխառությունների մասին տվյալներ***, ներառյալ՝ կուսակցության ստացած փոխառությունների վերաբերյալ փոխատու ֆիզիկական անձի դեպքում՝ անուն-ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի համարը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը և ՀՎՀՀ-ն, փոխատուի հաշվառման կամ գրանցման վայրի հասցեն, դրա անհնարինության դեպքում՝ փաստացի բնակության կամ գտնվելու վայրի հասցեն, փոխառության արժույթը, փոխառության մայր գումարի մնացորդը համապատասխան արժույթով, ամսաթիվը, տարեկան անվանական տոկոսադրույքը, փոխառության պայմանագրի կնքման և վերջնական մարման վերջնաժամկետի ամսաթվերը.[45]
- ***Կրեդիտորական պարտքերի մասին տեղեկություն***, մասնավորապես՝ կրեդիտորական պարտքերի հանրագումարը.

43 Նույնը, ինչպես նաև գործարքի կողմի անուն-ազգանուն կամ անվանումը, հաշվառման կամ գրանցման վայրի հասցեն ենթակա չեն հրապարակման:

44 Պարտավորությունների կողմ հանդիսացող բանկերի և վարկային կազմակերպությունների հասցեն ենթակա չէ հրապարակման:

45 Փոխատուի հաշվառման կամ գրանցման վայրի հասցեն, անձը հաստատող փաստաթղթի համարը կամ ՀՎՀՀ-ն ենթակա չեն հրապարակման:

| ***Այլ պարտավորությունների հանրագումարը***:

Ի լրումն նշվածի՝ կուսակցությունների տարեկան հաշվետվություններում առկա են Ծանոթագրությունների բաժիններ, որտեղ ֆինանսական տվյալների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն է ներկայացվում: Այսպես՝

- ***Ծանոթագրություն 1-ը*** ներառում է ֆիզիկական անձանցից ստացված դրամական նվիրատվությունների վերաբերյալ հետևյալ տեղեկություններ, ներառյալ՝ նվիրատուի անունը-ազգանունը՝ ըստ բանկային հաշվի քաղվածքում ներառված համապատասխան տվյալների, նվիրատուի անձը հաստատող փաստաթղթի համարը, նվիրատվության գումարը: Այն նաև ներառում է օրենքով սահմանված չափը գերազանցող կամ չթույլատրված աղբյուրներից ստացված և չվերադարձված դրամական նվիրատվությունների վերաբերյալ տեղեկություններ, ներառյալ՝ նվիրատվության գումարը՝ համապատասխան արժույթով, արտարժույթով տրված լինելու դեպքում՝ հաշվարկված ՀՀ Կենտրոնական բանկի գործարքի օրվա միջին փոխարժեքով:[46]
- ***Ծանոթագրություն 2-ը*** ներառում է հաշվետու տարվա ընթացքում կուսակցության անշարժ գույքի և տրանսպորտային միջոցների գծով հաշվարկված նվիրատվությունների գումարի ընդհանուր չափը, կուսակցության օգտին անհատույց կատարված աշխատանքներից կամ մատուցված ծառայություններից ստացված մուտքերի վերաբերյալ տեղեկությունները, այդ թվում՝
  - | կուսակցության օգտին անհատույց աշխատանք կատարած կամ ծառայություն մատուցած ֆիզիկական անձի՝ անուն-ազգանունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, ստացված աշխատանքի կամ ծառայության բնույթը, ստացված աշխատանքի կամ ծառայության գնա-

46 Ֆիզիկական անձ հանդիսացող, այդ թվում՝ օրենքով սահմանված չափը գերազանցող կամ չթույլատրված աղբյուրներից ստացված և չվերադարձված նվիրատվությունների նվիրատուի անձը հաստատող փաստաթղթի համարը ենթակա չեն հրապարակման:

հատվող գումարը ՀՀ դրամով, աշխատանքի կամ ծառայության ստացման ամսաթիվը.

- տեղական և միջազգային համագործակցության շրջանակներում կուսակցությանն ու նրա անդամներին ուսումնառության, վերապատրաստման, համաժողովներին, սեմինարներին ու նմանատիպ այլ միջոցառումներին մասնակցության նպատակով միջոցները հատուցող կազմակերպության (գործընկերոջ) անվանումը, գտնվելու վայրի հասցեն, ուսումնառության, վերապատրաստման, համաժողովների, սեմինարների ու նմանատիպ այլ միջոցառումների նկարագիրը, անցկացման վայրը, միջոցառման գնահատվող գումարը, միջոցառման սկզբի ամսաթիվը, միջոցառման ավարտի ամսաթիվը.
- անշարժ գույքը շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու արդյունքում հաշվարկված ոչ դրամային մուտքերի վերաբերյալ տեղեկությունները, ներառյալ՝ անշարժ գույքի հասցեն՝ ըստ սեփականության իրավունքի վկայականում նշված տվյալների, իսկ դրա բացակայության դեպքում՝ գույքի փաստացի գտնվելու վայրի հասցեն, անշարժ գույքը կադաստրային ծածկագիրը կամ սեփականության վկայականի համարը, անշարժ գույքի համապատասխան տեսակը, անշարժ գույքի կադաստրային արժեքը, գործարքի գումարը ՀՀ դրամով, օրենքի համաձայն հաշվարկված ոչ դրամային մուտքը (բնեղենով նվիրատվությունը), անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործմանը հանձնելու ամսաթիվը և ժամկետը, գույքի սեփականատեր ֆիզիկական անձի դեպքում անուն-ազգանունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գույքի սեփականատիրոջ հաշվառման կամ գրանցման հասցեն.
- այլ ոչ դրամական նվիրատվությունների վերաբերյալ տեղեկություններ, ներառյալ՝ նվիրատուի անուն-ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, նվիրատվության առարկան, նվիրատվության գնահատվող գումարը, ան-

շարժ գույքի դեպքում՝ համապատասխան գործարքի պետական գրանցման ամսաթիվը, իսկ այլ տեսակի նվիրատվության դեպքում՝ նվիրատվության առարկայի՝ կուսակցությանը փաստացի փոխանցման ամսաթիվը:[47]

- ***Ծանոթագրություն 3-ը*** ներառում է մուտքի վճար կամ անդամավճար վճարած անձանց անուն-ազգանունը՝ ըստ անձնագրային տվյալների, անձը հաստատող փաստաթղթի համարը, մուտքի վճարի կամ անդամավճարի գումարի չափը՝ ՀՀ դրամով, վճարման ամսաթիվը:[48]
- ***Ծանոթագրություն 4***-ը ներառում է կուսակցության անշարժ գույքի վաճառքից և վարձակալության հանձնումից ստացված մուտքերի վերաբերյալ մանրամասներ, ներառյալ՝ անշարժ գույքի կադաստրային ծածկագիրը կամ վկայականի համարը, անշարժ գույքի գտնվելու վայրի հասցեն՝ ըստ սեփականության իրավունքի վկայականում նշված տվյալների, իսկ բացակայության դեպքում՝ գույքի փաստացի գտնվելու վայրի հասցեն, անշարժ գույքի համապատասխան տեսակը, համապատասխանաբար առքուվաճառքի կամ վարձակալության պայմանագրի՝ պետական գրանցման ամսաթիվը, տվյալ գույքի համապատասխանաբար վաճառքից կամ վարձակալության հանձնումից ստացված մուտքերի գումարի չափը՝ ՀՀ դրամով:[49]

47 Կուսակցության օգտին անհատույց աշխատանք կատարողների և ծառայություններ մատուցողների անուն-ազգանուն կամ անվանումը, տեղական և միջազգային համագործակցության շրջանակներում կուսակցությանն ու նրա անդամներին ուսումնառության, վերապատրաստման, համաժողովներին, սեմինարներին ու նմանատիպ այլ միջոցառումներին մասնակցության նպատակով միջոցներ հատուցողների հասցեն, անշարժ գույքը շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման տրամադրված գույքի հասցեն, կադաստրային ծածկագիր կամ վկայականի համարը, վարձատուի հաշվառման կամ գրանցման հասցեն, այլ ոչ դրամական նվիրատվություններ տվող նվիրատուի անձը հաստատող փաստաթղթի համարը ենթակա չեն հրապարակման:

48 Մուտքի վճարներ և անդամավճարներ մուծող անձի անձը հաստատող փաստաթղթի համարը ենթակա չէ հրապարակման:

49 Անշարժ գույքի հասցեն, կադաստրային ծածկագիրը, վկայականի համարը ենթակա չեն հրապարակման:

- ***Ծանոթագրություն 5-ը*** ներառում է կուսակցության հիմնադրած ԶԼՄ-ների և հրատարակչությունների՝ հաշվետու տարում կուսակցությանը փոխանցած միջոցների (շահաբաժինների) վերաբերյալ տեղեկությունները, ներառյալ՝ ընկերության լրիվ անվանումը, ընկերության կանոնադրական կապիտալում կուսակցության մասնաբաժինը՝ տոկոսային արտահայտությամբ, կուսակցության շահաբաժնի գումարի չափը, ընկերության՝ հաշվետու տարվա գործունեությամբ ստացված ֆինանսական շահույթի կամ վնասի ընդհանուր գումարի չափը:[50]

50 Կուսակցության հիմնադրած ԶԼՄ-ների և հրատարակչությունների՝ հաշվետու տարվա գործունեությամբ ստացված շահույթը կամ վնասը ենթակա չէ հրապարակման: